


ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԽԱՂԱՂ ԼՈՒԾՄԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԳՊՐՈՅՆԵՐՈՒՄ

Գործնական ուղեցույց դասղեկական
ժամեր անցկացնելու համար





«Դասերի սկզբում ես չէի պատկերացնում, որ Խաղաղության կրթությունն ինչ-որ կերպ կարող է ազդել իմ կամ դասարանի որևէ աշակերտի վրա: Սակայն հիմա արդեն հասկանում եմ, որ ինձ մոտ շատ բան է փոխվել, իսկ դասարանը դարձել է ավելի միասնական: Դպրոցում բոլորը զարմացել էին, որ գերազանցության շաբաթվա ընթացքում մեր դասարանը զբաղեցրեց 2-րդ տեղը՝ ստանալով շաբաթվա ընթացքում 133 հատ «9» և «10» գնահատականներ՝ զիջելով հաղթողին ընդամենը երկու միավորով»

Վաչիկ Ղարիբյան
*թիվ 26 դպրոցի 8^ր դասարանի աշակերտ,
«Խաղաղության ուսուցման» կենտրոնի անդամ:*





Տեղեկատվություն «Խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» ծրագրի վերաբերյալ

Վերջին մի քանի տարիների ընթացքում մի շարք տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից ՀՀ Կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի հետ միասին փորձեր են արվում դպրոցի կրթական համակարգ ներմուծել խաղաղության, կոնֆլիկտների խաղաղ լուծման, հանդուրժողականության գաղափարները: Նպատակը հասկանալի է բոլորի համար: Այսօր առավել քան երբևէ անհրաժեշտ է դաստիարակել իր իրավունքները պաշտպանող և ուրիշի իրավունքները հարգող, կոնֆլիկտները խաղաղ եղանակով լուծելու ունակ և հանդուրժող վաղվա քաղաքացի: Առաջիններից մեկը, ով Հայաստանում ձեռնարկեց նմանատիպ կրթության իրականացումը, «Կանայք հանուն զարգացման» հասարակական կազմակերպությունն էր:

Սկսած 2002 թվականից կազմակերպությունը սկսեց «Խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» ծրագրի իրականացումը, որի հիմնական նպատակը խաղաղության մշակույթի և կոնֆլիկտների խաղաղ լուծման գաղափարների ձևավորումն էր ուսուցիչների և դպրոցականների շրջանում:

Ծրագրի շրջանակներում Շիրակի մարզի 16 դպրոցներում և Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտում հիմնվեցին «Խաղաղության ուսուցման» կենտրոններ: Դասերը կենտրոններում անցկացվում էին Կրթության ազգային ինստիտուտի և կազմակերպության մասնագետների կողմից մշակված մեթոդական ձեռնարկի հիման վրա:

2002-2010թթ. ընթացքում՝


- Ուսուցանվեցին 5-10-րդ դասարանների ավելի քան 1000 դպրոցականներ, մանկավարժական ինստիտուտի 150 ուսանողներ:
- Իրականացվեց «հավասարը հավասարին» մեթոդով ուսուցում 18 դպրոցների 3500 դպրոցականների և ավելի քան 500 ապագա ուսուցիչների համար:
- Անցկացվեցին դասընթացներ Շիրակ, Լոռի և Արագածոտն մարզերի 80-ից ավելի դպրոցների մոտ 550 ուսուցիչների համար:
- Կազմակերպվեցին սեմինար-պարապմունքներ ավելի քան 3200 ծնողների համար:
- Իրականացվեց հետազոտություն՝ գնահատելու նպատակով խաղաղության կրթության ազդեցությունը դպրոցականների վրա ուսուցումից մի քանի տարի անց:

Վերոհիշյալ հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ խաղաղության կրթության դասընթացն ավարտած դպրոցականներն ունեն բավարար հմտություններ և կարողություններ կոնֆլիկտների վերլուծության և պատճառների բացահայտման, հաղորդակցման, կոնֆլիկտների խաղաղ լուծման եղանակների վերաբերյալ: Նրանք ձեռք են բերել այնպիսի արժեքներ ինչպիսիք են՝

- Հարգանք տարբեր ազգերի պատմության և մշակույթի նկատմամբ,
- համոզմունք, որ խաղաղության մշակույթը սկսվում է յուրաքանչյուրից,
- ինքնավստահություն սեփական ուժերի նկատմամբ,
- սեփական իրավունքների պաշտպանության և պարտականությունների գիտակցման կարողություն:

Ուսուցիչների և ծնողների կարծիքով ծրագրին մասնակից դպրոցականները դարձել են հանդուրժող միմյանց նկատմամբ, նվազել են կոնֆլիկտային իրավիճակները, ծագած կոնֆլիկտները հիմնականում լուծվում են խաղաղ ճանապարհով՝ չվիրավորելով մարդկային արժանապատվությունը:

2011-2013թթ. «Խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» ծրագիրն իրականացվելու է Հայաստանի 11 մարզերի ընդհանուր թվով 70 դպրոց-





ներում՝ ընդգրկելով ավելի քան 280 ուսուցիչների/դասղեկների, 6-9-րդ դասարանների մոտ 4200 դպրոցականների: Այս փուլում ծրագրի հիմնական նպատակն է ձևավորել խաղաղարար միջավայր Հայաստանի դպրոցներում՝ նպաստելով կոնֆլիկտային իրավիճակներում բռնության դեպքերի նվազմանը:

Ծրագիրը մարզերում կիրականացվի Կրթության ազգային ինստիտուտի բոլոր մարզային կառույցների ղեկավարների և մասնագետների աջակցությամբ, ովքեր համապատասխան դասընթաց անցնելուց հետո կազմակերպության մասնագետների հետ միասին կիրականացնեն ուսուցիչների վերապրաստում, կհամակարգեն ծրագրի ներմուծման գործընթացը յուրաքանչյուր մարզի 5-ական դպրոցներում, կիրականացնեն վերահսկողություն տեղերում: Հիմնական մոտեցումը կայանում է հետևյալում՝ վերապատրաստված ուսուցիչները/դասղեկները իրենց կցված դասղեկական դասարաններում կանցկացնեն կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթությանն ուղղված դասղեկական ժամեր, որը կնպաստի խաղաղարար միջավայրի ձևավորմանն իրենց դասարաններում և դպրոցներում:

Ծրագրի ավարտին ակնկալվող հիմնական արդյունքը դա՝ բռնության դեպքերի ավելի քան 20% նվազումն է դպրոցներում:

Նկատի ունենալով ծրագրի ընթացքում նախորդ տարիներին ձեռք բերված հաջողությունները և համագործակցությունը Կրթության ազգային ինստիտուտի մարզային կառույցների հետ, համոզված ենք, որ հետագայում խաղաղության կրթությունը հնարավոր կլինի ներմուծել նաև Հայաստանի բոլոր դպրոցներ:





«Կանայք հանուն զարգացման» ՀԿ-ն հատուկ շնորհակալություն է հայտնում գերմանական EED կազմակերպությանը գործնական ուղեցույցի հրատարակումը ֆինանսավորելու համար:

“Women for Development” NGO expresses special gratitude to German EED for providing financial support for publication of the guide.



Հեղինակներ՝

Գոհար Սարկոսյան
Սուսաննա Ղազարյան

Համակարգչային ձևավորումը

Արամ Պիճիկյանի



Authors:


Gohar Markosyan
Susanna Ghazaryan

Computer design

Aram Pichikyan

EED-ն պատասխանատվություն չի կրում ուղեցույցում արտահայտված տեսակետների համար:

Ուղեցույցը նախատեսված է հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար, սակայն դրանից կարող են օգտվել խաղաղության կրթության բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, մանկավարժական բուհերի ուսանողները և բոլոր այն մասնագետներն ու անհատները, ովքեր շահագրգռված են խաղաղաշինության և կոնֆլիկտների խաղաղ լուծման հարցերով:




Բովանդակություն


Տեղեկատվություն «Խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» ծրագրի վերաբերյալ _____	2
Չեղինակների մասին -----	6
Գործնական ուղեցույցի նախաբան -----	8
ՄԱՍ 1 Կոնֆլիկտների կառավարում	

Դաս 1. Ի՞նչ է կոնֆլիկտը: Կոնֆլիկտի թեժացում -----	9
Դաս 2. Վարվելակերպի ոճերը կոնֆլիկտային իրավիճակներում -----	12
Դաս 3. Կոնֆլիկտների խաղաղ լուծման հմտություններ -----	14
Դաս 4. Կոնֆլիկտների խաղաղ լուծման պատվիրաններ և եղանակներ -----	16
Դաս 5. «Կոնֆլիկտների կառավարում» թեմայի ամփոփում -----	20
«Կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» հավասարը հավասարին եղանակով -----	22

ՄԱՍ 2 «Խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» ձեռնարկի հիման վրա Գյումրու դպրոցներում անցակցված դասղեկական հանդիպման ժամերի օրինակներ

1. «Կոնֆլիկտ սերունդների միջև, հայրեր և որդիներ» Չեղ.՝ Անահիտ Ջուլիակյան, թիվ 2 դպ. -----	28
2. «Խաղաղության խորհրդանիշերը: Ձինված հակամարտության ազդեցությունը երեխաների զարգացման վրա» Չեղ.՝ Ռիտա Խաչատրյան, թիվ 4 դպ. -----	31
3. «Կոնֆլիկտի առաջացման հիմնական պատճառները» Չեղ.՝ Ասյա Ղազարյան, թիվ 2 դպ. -----	34
4. «Խաղաղություն և կոնֆլիկտների խաղաղ լուծում» Չեղ.՝ Օհաննա Ավետիսյան, թիվ 20 դպ. -----	37
5. «Խաղաղասեր ծնողներ, խաղաղասեր երեխաներ» Նյութը թարգմանված է Նաոմի Դրյուի համանուն գրքից -----	40





Գոհար Մարկոսյան

Գոհար Մարկոսյանը ունի հասարակական կազմակերպությունում ղեկավար աշխատանքի ավելի քան 15 տարվա փորձառություն: Նա կարևոր ներդրում է ունեցել Հայաստանում երիտասարդների, դպրոցականների, ուսուցիչների և ապագա ուսուցիչների խաղաղության կրթության բնագավառում:


Գոհար Մարկոսյանը ավարտել է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետը և Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի Երկրաբանության բաժնի ասպիրանտուրան: Պաշտպանելով թեկնածուական թեզը՝ 1990թ. ստացել է գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Աշխատանքային գործունեության 24 տարիները Գ. Մարկոսյանը ցվիրել է գիտահետազոտական աշխատանքին, որից 7 տարին զուգորդել է «Կանայք հանուն զարգացման» ՀԿ (ԿՀՁ ՀԿ) փոխնախագահի պաշտոնի հետ:

Անցած 8 տարիների ընթացքում տիկ. Մարկոսյանը աշխատել է միայն ՀԿ սեկտորում: 2007թ. մայիսից նա ԿՀՁ ՀԿ-ի նախագահն է: 2002թ. Գոհար Մարկոսյանը կորորինացրել է «Խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն Հայաստանի դպրոցներում» ծրագիրը՝ մասնակցելով Հայաստանի դպրոցականների համար խաղաղության կրթության դասընթացի մշակման աշխատանքներին, ղեկավարելով և անցկացնելով 10 դպրոցների դպրոցականների և ուսուցիչների համար նախատեսված դասընթացները, ինչպես նաև կազմակերպելով դասընթացներ Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողների համար:

Գոհար Մարկոսյանը մասնակցել է մի շարք սեմինարների և ուսուցողական դասընթացների խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթության բնագավառում: Այդ թվում՝ 2002թ. մայիս-հունիս ամիսներին մասնակցել է «Խաղաղաշինություն և կոնֆլիկտների փոխակերպում» ամառային ինստիտուտին ԱՄՆ-ում, 2002-2004թթ. UNESCO/EURED «Մարդու իրավունքներ և խաղաղության ուսուցում Եվրոպայում», ուսուցիչների վերապատրաստման երկամյա դասընթացին: Խաղաղության կրթության բնագավառում նա կազմակերպել է մի շարք սեմինարներ այնպիսի կարևոր միջազգային համաժողովների ընթացքում ինչպիսիք են՝ 2007 և 2008թթ. ԱՄՆ-ում «Կոնֆլիկտների լուծման կրթության միջամերիկյան վեհաժողովը» և «Կոնֆլիկտների լուծման կրթության միջազգային գիտաժողովը», 2010թ. Կանադայում «Խաղաղության կրթության 8-րդ տարեկան գիտաժողովը» և այլն:

Գ. Մարկոսյանը տպագրել է ավելի քան 24 հոդված: Նա համահեղինակ է մանկավարժների համար նախատեսված «Խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» ձեռնարկի և 2002թ. ԿՀՁ ՀԿ-ի կողմից լույս տեսնող «Խաղաղության կամուրջներ» ամսագրի: Գոհար Մարկոսյանը անդամակցում է տարբեր միջազգային համացանցերի և կոալիցիաների՝ ներառյալ «Կոնֆլիկտների խաղաղ լուծման և խաղաղության կրթության միջազգային համացանցը» (INCREPE), Խաղաղության հետազոտության միջազգային ասոցիացիան (IPRA), Ձինված կոնֆլիկտների կանխարգելման համաշխարհային գործընկերությունը (GPPAC), ՄԱԿ - ի կանանց հիմնադրամի «Կանայք հանուն խաղաղության Հարավային Կովկասում» կոալիցիան և այլն:




Սուսաննա Ղազարյան

Սուսաննա Ղազարյանը ունի հասարակական կազմակերպությունում աշխատանքի ավելի քան 15 տարվա փորձառություն: Նա «Կանայք հանուն զարգացման» ՀԿ-ի կրթական բաժնի պատասխանատուն է 1997թ-ից: 2002թ. Սուսաննա Ղազարյանը հանդիսացել է «Խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն Հայաստանի դպրոցներում» ծրագրի գլխավոր մասնագետ՝ մասնակցելով դպրոցականների համար խաղաղության կրթության դասընթացի մշակման աշխատանքներին, անցկացնելով դասընթացներ Շիրակի մարզի ավելի քան 16 դպրոցների դպրոցականների, ուսուցիչների և Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողների համար: Սուսաննա Ղազարյանը խաղաղության թեմաներով դասընթացներ է անցկացրել նաև Վրաստանի և Հայաստանի մի քանի բնակավայրերում (Բուլնիսի, Ծալկայի շրջանի Կուլջի, Քութաիսի, Գյումրի, Վանաձոր):

Ս. Ղազարյանը մասնակցել է խաղաղության կրթության բնագավառում անցկացված մի շարք վերապատրաստման դասընթացների: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել 2006-2008թթ. OWEN-ի (Արևելյան-Արևմտյան Եվրոպայի կանանց ցանցային կենտրոնի) կողմից իրականացվող «Omibus 1325» ծրագրի շրջանակներում անցկացվող դասընթացներին: Սուսաննա Ղազարյանը համահեղինակ է 2008թ. մանկավարժների համար նախատեսված «Խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» ձեռնարկի:

Ս. Ղազարյանը անդամակցում է միջազգային «Omibus 1325» խաղաղասիրական համացանցին, ակտիվորեն համագործակցում և համատեղ ծրագրեր է իրագործում ցանցի անդամների հետ:





Գործնական ուղեցույցի նախաբան

Դասղեկական ժամերի անցկացման համար նախատեսված գործնական ուղեցույցը իրենից ներկայացնում է «Խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» ձեռնարկի յուրօրինակ հավելված: Գործնական ուղեցույցը նպատակ ունի առավել դյուրին դարձնել դասղեկների աշխատանքը և նրանց ուշադրությանը ներկայացնել կոնկրետ օրինակներ Գյումրու դպրոցներում անցկացված դասղեկական ժամերից:

Ուղեցույցը բաղկացած է 2 մասից: Առաջին մասում հեղինակների կողմից առանձնացվել են կոնֆլիկտների կառավարման, կոնֆլիկտների խաղաղ լուծման հիմնական հմտություններին վերաբերող թեմաներ և դասղեկներին ուղղված մեթոդական ցուցումներ: Ուղեցույցին կից դասղեկներին տրվող գունազարդ պաստառների միջոցով հնարավոր կլինի առանց դժվարությունների և նույնիսկ առանց նախնական հատուկ պատրաստվածության դասղեկական ժամերի ընթացքում քննարկել կոնֆլիկտների խաղաղ լուծման ուղղված թեմաներ, հնարավորություն տալ աշակերտներին ինքնուրույն քննարկել իրենց հետաքրքրող թեմաները: Ուղեցույցի երկրորդ մասում տեղ են գտել «Խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» ձեռնարկի հիման վրա Գյումրու մի շարք դպրոցներում ուսուցիչների կողմից անցկացված դասղեկական հանդիպման ժամերի և ծնողների համար նախատեսված սեմինարների կազմակերպման համար նյութեր: Վերջինս թարգմանվել և փորձարկվել է խաղաղության կրթության բնագավառում աշխարհում հայտնի ամերիկյան մասնագետ Նաոմի Դրյուի «Խաղաղասեր ծնողներ, խաղաղասեր երեխաներ: Երջանիկ ընտանիք կառուցելու գործնական ուղիներ» գրքից:

Հանդգլված ենք, որ ներկայացվող ուղեցույցը կօգնի երեխաների շրջանում տարածել այն տարրական հմտություններն ու գիտելիքները, որոնք անհրաժեշտ են կոնֆլիկտները խաղաղ ճանապարհով լուծելու և մեր դպրոցներում ու համայնքներում խաղաղարար միջավայր ձևավորելու համար:

Ծրագրի և սույն Ուղեցույցի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ «Կանայք հանուն զարգացման» ՀԿ-ի գրասենյակից.

Հասցե՝ Շահինյան 6ա, բն. 16

ք. Գյումրի, 3118, Հայաստան

Հեռախոսներ: (+0374312) 33007, (+037491) 430161,

էլ.հասցե: goharmarkosyan@yahoo.com


susanna-gh@list.ru

Էլ. կայք: www.wfd.am

Հեղինակներն ուրախ կլինեն ստանալու Ուղեցույցի վերաբերյալ ձեր առաջարկություններն ու դիտողությունները:

ՄԱՍ 1

Կոնֆլիկտների կառավարում



Դաս 1 Ի՞նչ է կոնֆլիկտը: Կոնֆլիկտի թեժացում

Դասի ընթացքը

Դասը սկսեք կոնֆլիկտների ազդեցության մասին երեխաներին հակիրճ տեղեկություն հաղորդելով.

Կոնֆլիկտները մեր կյանքի անբաժանելի մասն են: Կոնֆլիկտները բնորոշ են կյանքի բոլոր ոլորտներին: Դրանց մեջ ներքաշվում են բոլոր մարդիկ: Կոնֆլիկտները մեծ ազդեցություն են ունենում յուրաքանչյուր մարդու, ընտանիքի, կազմակերպության և ընդհանուր առմամբ ողջ մարդկության կյանքում: Թերևս չկա մեկը, որը երբևէ չի ներքաշվել կոնֆլիկտի մեջ: Հայտնի ասույթի համաձայն. «Եթե ձեր կյանքում կոնֆլիկտներ չեն եղել, ապա ստուգեք՝ արդյո՞ք բաբախում է ձեր զարկերակը»:

Կոնֆլիկտն իր մեջ կարող է պարունակել քայքայիչ դրսևորումներ, որոնք խոչընդոտում են զարգացմանը և խանգարում խաղաղության մշակույթի արմատավորմանը: Մասնավորապես, կոնֆլիկտը կարող է դառնալ վախի, չարության, հիասթափության, անվտանգության բացակայության կանխազգացման և բացասական այլ հոգեվիճակների աղբյուր: Կոնֆլիկտները նպաստում են մարդկանց բնական ազդեցիվության աճին, ինչն էլ իր հերթին ստիպում է շրջապատին ենթարկվել և ընդունել միայն տվյալ անձի (կամ խմբի) հետաքրքրությունները, արժեքները և պահանջները՝ որպես միակ ճշմարիտ ու գոյություն ունեցողը:

Կոնֆլիկտի մասին խոսելիս մարդիկ առաջին հերթին մտածում են դրա՝ վերը նշված խոչընդոտող, վատ ազդեցությունների մասին, սակայն կոնֆլիկտը կարող է ունենալ նաև դրական ազդեցություն: Մասնավորապես.

- Ներքաշվելով կոնֆլիկտի մեջ՝ մենք սովորում ենք, նոր գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերում, հարստացնում մեր անձնական փորձը:
- Կոնֆլիկտը օգնում է մեզ հասկանալ, որ կան մարդիկ, խմբեր, որոնց շահերն անտեսված են (օր. չունեն բնակարան, հաշմանդամ են, գործազուրկ են և այլն), որոնք ուշադրության և աջակցության կարիք ունեն:
- Կոնֆլիկտն ընկած է բարեշրջման (էվոլյուցիայի) հիմքում: Հայտնի գիտնականներ Գալիլեո Գալիլեյը և Ջորդանո Բրունոն ձևակերպեցին գիտական մի տեսություն, որը չէր համապատասխանում ժամանակի կրոնական պատկերացումներին: Թեև գիտնականները պատժվեցին (առաջինին դատապարտեցին ցմահ տնային կալանքի, մյուսին այրեցին խարույկի վրա), սակայն այս կոնֆլիկտը նպաստեց գիտության զարգացմանը:

Առաջադրանք աշակերտներին

- Հիշե՛ք կոնֆլիկտների օրինակներ, որոնք տեղի են ունեցել ընտանիքում, դասարանում դպրոցում, պատմության մեջ և այլն:
- Ստաբերե՛ք մեկ օրինակ, երբ կոնֆլիկտը դրական ազդեցություն է ունեցել:
- Փորձե՛ք տալ կոնֆլիկտի՝ ձեր սահմանումը:



Մի քանի աշակերտների օրինակները և ձևակերպած սահմանումները ունկնդրելուց հետո ներկայացրեք հետևյալ սահմանումը:

Կոնֆլիկտը մրցակցության ձև է, որը ծագում է, երբ երկու կամ ավելի թվով մարդիկ կամ մարդկանց խմբեր ունենում են իրականում անհամատեղելի կամ թվացյալ անհամատեղելի նպատակներ:

Ամփոփելով վերը շարադրվածը, մեկ անգամ ևս նշենք, որ կոնֆլիկտներն անխուսափելի են, սակայն կարելի է խուսափել կոնֆլիկտների բացասական ազդեցությունից, եթե սովորենք կառավարել դրանք: Իսկ կառավարել կոնֆլիկտները, նշանակում է՝ իմանալ կոնֆլիկտների զարգացման օրինաչափությունները, կարողանալ համապատասխան գործողություններով ու վերաբերմունքով ուղղորդել կոնֆլիկտի զարգացումը դեպի դրական ելք, որը կբավարարի երկու կողմերին էլ:


Դասը շարունակեք կոնֆլիկտների թեժացման մասին խոսելով, նկարագրեք կոնֆլիկտների զարգացման մակարդակները՝ օգտվելով առաջին պաստառից: Նկարագրեք յուրաքանչյուր մակարդակում մարդու վարքագծում առաջացող փոփոխությունները:



Յուրաքանչյուր կոնֆլիկտ յուրահատուկ է, բայց միևնույն ժամանակ բոլոր կոնֆլիկտներն էլ ունեն ինչ-որ ընդհանուր բան: Օրինակ՝ ընդհանուրն այն ճանապարհն է, որով անցնում են կոնֆլիկտները՝ ծագման պահից մինչև ծայրահեղ սրացումը:

Դուք ինքներդ էլ կարող եք հիշել ձեզ հետ կապված կոնֆլիկտներ, որոնք անցել են զարգացման նույն փուլերը, և դուք իմացել եք, որ ինչ-որ կոկրետ մի քայլից հետո հետևելու են թշնամությունը, փոխադարձ վիրավորանքները և այլն:

Գոյություն ունի կոնֆլիկտի զարգացման 5 մակարդակ, այսպես կոչված՝ «եսկալացիայի սանդուղք»: Ամեն մի աստիճանն արտացոլում է կոնֆլիկտի ավելի բարձր սրացող մակարդակը, որի ընթացքում միմյանց հասցվող հարվածները դառնում են ավելի ու ավելի քայքայիչ:



Կոնֆլիկտի թեժացման մակարդակները.

- I. Ծագել է ինչ-որ մի խնդիր, որը պետք է լուծել: Մենք ենթադրում և հուսով ենք, որ կարող ենք դա լուծել ու պատրաստ ենք խոսել այդ մասին:
- II. Կա անհամաձայնություն կողմերի միջև, և արդեն երկու կողմերն էլ անցնում են ինքնապաշտպանության: Մտածում են, որ անհրաժեշտ է փոխզիջումներ անել, սակայն շատ դժվարությամբ են ընդհանուր լեզու գտնում և հաղորդակցվում:
- III. Առկա է մրցակցություն. երկու կողմերն էլ նպատակ ունեն հաղթանակի հասնել, զայրանում են, վրդովվում, ոչ մեկը չի ցանկանում փոխել իր դիրքորոշումը:
- IV. Արդեն բացահայտ պայքար է. կողմերի հիմնական նպատակը մեկը մյուսին վիրավորելն է: Տիրում է թշնամական մթնոլորտ: Երկուսն էլ փնտրում են համախոհներ:
- V. Բացահայտ պատերազմ է. կողմերի հիմնական նպատակը հակառակորդին ոչնչացնելն է, երկուսն էլ ցանկություն ունեն մեկը մյուսից վրեժխնդիր լինել, չկա ոչ մի հաղորդակցում:


Կոնֆլիկտի զարգացման ժամանակ մարդու վարքագծի մեջ առաջ են գալիս որոշ փոփոխություններ:

- Կոնֆլիկտի մեջ մտած մի կողմը մյուսին դիտում է որպես թշնամի:
- Հիշվում են հակառակորդ կողմի միայն բացասական և զայրացնող գծերն ու վարքագիծը:
- Մարդն իր վրա պատասխանատվություն չի վերցնում և ձգտում է ամեն ինչում մեղադրել մյուսին:
- Կողմերը դառնում են ինքնամփոփ և տեղեկատվություն չեն փոխանակում, որպեսզի հակառակորդը չկարողանա օգտվել դրանից՝ հօգուտ իրեն:
- Կողմերն ավելի ու ավելի են համոզվում սեփական կարծիքի ճշմարտացիության մեջ և չեն ցանկանում փոխել այն:
- Կողմերն ընդունում են «ես ճիշտ եմ, իսկ նա՝ սխալ» դիրքորոշումը, և նրանց միջև խախտվում է հաղորդակցումը:
- Հակառակ կողմի ցանկացած գործողություն դիտվում է որպես թշնամական:

Դասի ամփոփում

Դասի վերջում աշակերտների հետ քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ քննարկեցինք դասի ընթացքում (աշակերտները ներկայացնում են դասի ընթացքը):
- Ի՞նչ սովորեցիք այս դասից:
- Նշեք 1-2 բան, որ կարևոր էր ձեզ համար:





Դաս 2

Վարվելակերպի ոճերը կոնֆլիկտային իրավիճակներում

Դասի ընթացքը

Որպեսզի կարողանանք կառավարել կոնֆլիկտը, անհրաժեշտ է գիտենալ կոնֆլիկտային իրավիճակներում մեր ընտրած վարվելակերպի հետևանքները: Դրա համար աշակերտներին առաջարկեք խաղ՝ «Անցկացրու դիմացինիդ քո կողմը»:

Հատակին կավիճով գիծ քաշեք: Ձույզ-զույզ կանչեք աշակերտներին և հանձնարարեք կանգնել գծի տարբեր կողմերում՝ դեմ դիմաց: Յուրաքանչյուրից պահանջվում է դիմացի կանգնածին առանց խոսքի անցկացնել գծից դեպի իր կողմը: Բոլոր ձևերը թույլատրելի են: Գիծը կոնֆլիկտն է: Վերջում նրանք պետք է բացատրեն, թե ինչպես վարվեցին, և արդյունքում ինչ ստացվեց:

Ցանկալի է խաղին մասնակից դարձնել բոլոր աշակերտներին, իսկ եթե ժամանակը չբավականացնի, և ստորև բերվող 5 ոճերն էլ ստացվել են, ապա կարելի է ուղղակի հարցնել մյուսներին՝ իսկ դուք ինչպե՞ս կպահեիք ձեզ, եթե տանը մայրիկը բարկանում է օրինակ, երաժշտության բարձր ձայնի համար: Երեխաները կտան տարբեր պատասխաններ, որոնք պետք է նորից բացատրել արդեն դասակարգված 5 ոճերի տեսանկյունից:

Եթե խաղի ընթացքում երեխաները չեն ընտրում 5 ոճերից որևէ մեկը, ապա դասավանդողը կարող է ինքը դառնալ խաղացող, ընտրել աշակերտներից մեկին (կամ եթե ներկա այլ ուսուցիչ կա, նախապես պայմանավորվել) և ցույց տալ դասարանին այդ վարվելակերպը և բացատրել արդյունքը:

Աշակերտներին ներկայացրեք կոնֆլիկտային իրավիճակներում վարվելակերպի հետևյալ 5 ոճերը.

- Մրցակցություն - ուժի գործադրում է, երբ մի կողմը հաղթում է, իսկ մյուսը՝ պարտվում:
- Ձիջում - երբ մի կողմը, հարգելով դիմացինին, ինքնական անցնում է մյուսի կողմը՝ պարտվելով և հաղթանակ պարգևելով դիմացինին:
- Փախուստ - երբ ոչ մի կերպ էլ չեն գտնում և առանց հանձնարարությունը կատարելու նստում են՝ չկողմնորոշվելով, թե ինչ կարելի է անել: Այս դեպքում կոնֆլիկտի լուծումը «պարտություն-պարտություն» արդյունք է ստացվում:
- Փոխգիջում - երբ երկուսն էլ համաձայնվում են կանգնել գծի վրա՝ հաղթանակը կիսելով դիմացինի հետ:
- Համագործակցություն - ժեստերով բանակցելուց հետո մեկն անցնում է դիմացինի կողմը, իսկ մյուսը՝ հակառակ (իր ցանկությամբ): Այս դեպքում գրանցվում է լավագույն՝ «Հաղթանակ-հաղթանակ» ելքը:

Վերլուծեք երեխաների վարվելակերպը, բացատրեք արդյունքը, այսինքն՝ կոնֆլիկտի ժամանակ, նրանց վարվելակերպից կախված, ինչպիսի ելք է ստացվում արդյունքում: Ո՞րն է նախընտրելի և ինչու: Ինչպիսի՞ վարվելակերպն է նպաստում երկու կողմի համար ցանկալի «Հաղթանակ-հաղթանակ» ելքին:

Աշակերտների ուշադրությունը հրավիրեք «Կոնֆլիկտային իրավիճակներին բնորոշ վարվելակերպի ոճեր» պաստառին: Պաստառում ներկայացված գրաֆիկը դասական կոնֆլիկտոլոգիայի մեջ կոչվում է Թոմաս-Կիլմենի ցանց:



Աշակերտների օգնությամբ կարդացեք և բացատրեք ներկայացված գրաֆիկը: Այն կօգնի կառավարել կոնֆլիկտները, կօգնի հասկանալ, թե որ դեպքում է մեզ համար առավել կարևոր դիմացիոնի հետ փոխհարաբերությունների պահպանումը, որ դեպքում առավել կարևոր մեր նպատակը, ի՞նչ կարող ենք անել փոխզիջման հասնելու և ի՞նչ՝ համագործակցելու համար, ի՞նչ կարող ենք շահել, եթե փախուստի ենք դիմում կամ զիջում մեր դիրքերը: Այստեղ ամենակարևորն այն է, որ աշակերտներն ընկալեն վարվելակերպի տարբեր ոճերի առանձնահատկությունները և հասկանան, որ կոնկրետ կոնֆլիկտային իրավիճակն ինքն է երբեմն թելադրում վարվելակերպի կոնկրետ ոճի ընտրությունը: Կարող են լինել իրավիճակներ, երբ իսկապես չափազանց անհրաժեշտ է մրցակցությունը՝ նպատակին առավել հասնելու համար (օրինակ, երբ կանգնած է հայրենիքի կամ ընտանիքի պաշտպանության հարցը), սակայն կարող են լինել նաև իրավիճակներ, որոնք թելադրում են փախուստ խնդրից (որոշակի ժամանակ շահելու) կամ զիջում՝ հարաբերությունները պահպանելու համար: Մեկ անգամ ևս շեշտեք, որ ամենաընդունելի վարվելակերպը համագործակցությունն է, որի դեպքում մենք կարողանում ենք առավելագույնս հասնել մեր նպատակին և պահպանել փոխհարաբերությունները դիմացիոնի հետ:

Դասի ամփոփում

Դասի վերջում աշակերտների հետ քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ քննարկեցինք դասի ընթացքում (աշակերտները ներկայացնում են դասի ընթացքը):
- Ի՞նչ սովորեցիք այս դասից:
- Նշեք 1-2 բան, որ կարևոր էր ձեզ համար:



Դաս 3

Կոնֆլիկտների խաղաղ լուծման հմտություններ

Դասի ընթացքը

Աշակերտներին առաջարկեք հերթով մոտենալ Պաստառ 3-ին, կարդալ կոնֆլիկտների խաղաղ լուծման հմտություններից մեկը, փորձել ինքնուրույն բացատրել այն և մեկնաբանել, թե ինչու՞ այս սկզբունքներին հետևելու դեպքում հնարավոր կլինի կասեցնել կոնֆլիկտի թեժացումը: Ավելացրեք նաև ձեր մեկնաբանությունները:

Դրանք են.

- Պատասխանատվություն կրե՞ք ձեր պահվածքի, մտքերի և զգացմունքների համար (օրինակ, եթե դուռը շրխկացնելով դուրս ես գալիս, դժվար թե ձեր վեճը շուտ ավարտվի...):
- Աշխատե՞ք, որպեսզի հակառակորդ կողմի պահվածքը չթելադրի ձեր սեփական պահվածքի ձևը (օրինակ, եթե վեճի ժամանակ դիմացինը գոռում է, աշխատեք չգոռալ, ընդհակառակը, խոսեք ինչքան հնարավոր է հանգիստ՝ ճիշտ ընտրելով արտահայտությունները, օրինակ, ոչ թե «Դու ինձ խաբում ես», այլ «Ես ինձ խաբված եմ զգում»):
- Հիշե՞ք, որ ցանկացած մարդ ունի ընտրության իրավունք, և նա պետք է վարվի իր սեփական հայացքներին և ընկալումներին համապատասխան, անկախ այն բանից, թե ինչպես են պահում իրենց մյուսները:
- Արտահայտե՞ք զգացմունքներն առանց ահաբեկումների (օրինակ՝ «... Դու դեռ կփոշմանես», «Այ, հետո՛ կտեսնես», «Ես քեզ ցույց կտամ» և այլն):
- Պետք չէ՞ ընդլայնել վիճելի հարցը, խոսե՞ք կոնկրետ խնդրի մասին: (օրինակ՝ «Գայլն ու գառը». «Էն էլ չըլնի հերվանը, չեմ մոռացել էն բանը, որ հենց էստեղ, նույն օրը հայիոյեցիր իմ հորը»: Չվիրավորել անձը, նրա ընտանիքի անդամներին):
- Պետք չէ՞ հղումներ անել այլ մարդկանց, կամ հեղինակությունների վերաբերմամբ: (օրինակ՝ «Դասղեկն ասաց, որ դու վատն ես», «Ձեր թաղի երեխաներն էլ չեն սիրում քեզ» և այլն):
- Մի՞ օգտագործեք «միշտ» և «երբեք» բառերը: (Օրինակ՝ «Դու մի՛շտ էլ քեզ այդպես ես պահել», «Ես քեզ հետ երբեք չեմ համաձայնի» և այլն):
- «Պիտակներ» մի՞ կպցրեք այլ մարդկանց (օրինակ, «հիմար», «էշի մեկը», «ապուշ» և այլն):
- «Տաք» գլխով որոշումներ մի՞ կայացրեք, սպասեք, մինչև կրքերը մի փոքր հանդարտվեն:

Այս հմտություններն ավելի գործուն կլինեն, եթե դրանք պահպանեն կոնֆլիկտի մեջ ներգրավված բոլոր կողմերը:

Կարելի է ծավալել քննարկում աշակերտների բերած կոնկրետ օրինակների վրա:



Դասի անփոփում

Դասի վերջում աշակերտների հետ քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ քննարկեցինք դասի ընթացքում (աշակերտները ներկայացնում են դասի ընթացքը):
- Ի՞նչ սովորեցիք այս դասից:
- Նշեք 1-2 բան, որ կարևոր էր ձեզ համար:

Դաս 4

Կոնֆլիկտների խաղաղ լուծման պատվիրաններ և եղանակներ

Դասի ընթացքը

Շատ հաճախ մենք կոնֆլիկտի մեջ ենք մտնում այն պատճառով, որ զայրացած ենք կամ ինչ-որ բանից բորբոքված: Հնարավոր է, որ եթե մենք փորձեինք հենց սկզբից զսպել մեզ, ապա կկարողանայինք խուսափել տհաճություններից: Հիշենք լատինական ասացվածքը. «Յուպիտեր, դու զայրանում ես, նշանակում է՝ դու ճիշտ չես»: Իրականում, մենք հատկապես ջղային հակազդեցություն ենք ցույց տալիս այն իրավիճակում, երբ զգում ենք, որ այնքան էլ ճիշտ չենք:


Ձսպելով կոկորդներս խեղդող ցասումը՝ հարցնենք ինքներս մեզ. «Ինչու՞ եմ այսպես տաքացած հարձակվում, արդյո՞ք սա սեփական մեղքի բաժինն ունենալու սրտնեղությունից չէ»:

Իրերի ճշմարիտ դրությունն ըմբռնելու համար բավական քաջություն է անհրաժեշտ: Սենք ի վիճակի ենք, եթե ոչ հիմնովին հանգուցալուծել կոնֆլիկտը, ապա գոնե մեծապես նվազեցնել դրա ավերիչ ուժը:



Կան մի քանի կարևոր պատվիրաններ, որոնք պետք է կիրառել կոնֆլիկտների խաղաղ լուծման նպատակով: Դրանք են.

1. Փորձիր վերլուծել իրավիճակը:
2. Աշխատիր հասկանալ դիմացինին:
3. Կարողացիր ուշադիր լսել:
4. Հարցեր տուր:
5. Փորձիր գտնել խնդրի լավագույն լուծումը:



1. Փորձի՛ր վերլուծել իրավիճակը

Մինչև հակառակ կողմին որևէ հարցում մեղադրելը, ուշադիր վերլուծիր իրավիճակի հնարավոր բոլոր մանրամասները, ինքդ քեզ հարցեր տուր. օրինակ՝ ի՞նչը կարող էր ստիպել ընկերոջդ նման քայլ անելու, կամ քեզ հետ կոպիտ խոսելու, կամ ժամադրությունից ուշանալու և այլն: Գուցե ուշանալու համար ընկերոջդ վրա ձայնդ բարձրացնելուց առաջ կնկատես, որ նրա աչքերը արցունքոտված են և հետևություն կանես, որ ուշանալու համար նա լուրջ պատճառներ է ունեցել:

2. Աշխատի՛ր հասկանալ դիմացինին

Պետք է փորձել լավ տրամադրվել դիմացինի նկատմամբ: Ստովի քեզ նրա տեղը դիր և պատկերացրու, թե ինչն է նրան այդ վիճակին հասցրել: Նայելով դիմացինի աչքերին, հետևելով նրա դեմքի, կեցվածքի, ձեռքերի դիրքի փոփոխություններին՝ փորձիր պատկերացնել, թե դու ինչ կզգայիր և ինչ կանեիր այդպիսի իրավիճակում: Հիշի՛ր, որ հասկանալ դիմացինին, դեռ չի նշանակում համաձայնվել նրա հետ: Մի՛ հրաժարվիր քո ընկալումից, բայց փորձիր հակառակ կողմի հետ զրույցի միջոցով նոր ձևով ընկալել խնդիրը:

3. Կարողացի՛ր ուշադիր ունկնդրել

Եթե դուք հնարավորություն տաք «հակառակորդին» թուլացնելու լարումը և դադար տաք, ապա դա կլիցքաթափի նրան և կթեթևացնի կոնֆլիկտի հետագա ընթացքը: Անշուշտ, անհրաժեշտ է նաև ուշադիր լսել նրա ասածը.

- դա օգնում է դիմացինի մասին ավելի շատ տեղեկություններ ստանալ,
- բավարարում է նրանց լաված լինելու զգացումը,
- օգնում է, որպեսզի նրանք հավատան, որ դուք իրենց հասկանում եք,
- այդ դեպքում ավելի հավանական է, որ ձեզ էլ կլսեն,
- վիճաբանության շղթան կկտրվի, և հարաբերությունները կբարելավվեն:

Ունկնդրելու ժամանակ պետք չէ ինքնապաշտպանությամբ զբաղվել կամ խորհուրդներ տալ («Դու սխալ ես վարվում, բերածդ փաստերը սխալ են», «Համաձայն եմ, բայց իմ մեղքով չի եղել», «Ախր, դա այնքան պարզ էր, որ դու պետք է իմանայիր») և այլն):

Զրույցն ավելի խաղաղ կանցնի, եթե դուք հայտնեք դիմացինին նրա խոսքերի թողած տպավորության և այն մասին, թե ինչ վիճակի են հասցրել ձեզ դրանք: Օրինակ՝ չարժե ասել «Դուք անտաշի մեկն եք», կամ «Դուք ինձ կոպտում եք», ավելի լավ է ասել. «Ես վիրավորվում եմ ձեր խոսքերից», «Ես վշտացած եմ, որ ինձ հետ այդպես եք խոսում»:


Երբեմն օգտակար է արտահայտվել նաև դիմացինի հուզական վիճակի մասին: Օրինակ՝ «Ինձ թվում է, որ սա ձեզ վշտացնում է»:

4. Հարցեր տու՛ր

- դիմացինի տեսակետն իմանալու,
- պակասող տեղեկություններ ստանալու,
- հակառակ կողմին ցույց տալու համար, որ իրեն լսում են:

Կան հարցեր, որոնք օգնում են, որպեսզի զրույցը շարունակվի: Օրինակ՝ «Երբ ասացիր, որ..... ի՞նչ է նկատի ունեիր», կամ՝ «Ես կուզեմայի իմանալ քո տեսակետը», «Ի՞նչը քեզ դրդեց, որ այդպես վարվեցիր» և այլն:

Կան հարցեր, որոնք խանգարում են, որպեսզի զրույցը շարունակվի: Դրանք այն հարցերն են, որոնց պատասխանը «Այո» կամ «Ո՛չ» է, կամ այնպիսիք, որոնք պարունակում են նաև պատասխան: Օրինակ՝ «Ձե՞ս կարծում, արդյոք, որ ավելի ճիշտ կլիներ, եթե...»:



5. Փորձիր գտնել խնդրի լավագույն լուծումը

- Պետք է գտնել այնպիսի լուծում, որի դեպքում ձեզանից ոչ մեկն իրեն չզգա նվաստացած, ստիպված չլինի իր համար իսկապես կարևոր ինչ-որ բան զիջել:
- Հավատա՛, որ միշտ կարելի է գտնել այնպիսի ելք, որի դեպքում դուք կսկսեք ավելի լավ հասկանալ մեկը մյուսիդ:

Կոնֆլիկտների խաղաղ լուծման եղանակներ

Կոնֆլիկտների խաղաղ լուծման եղանակներ պաստառի միջոցով աշակերտների օգնությամբ բացատրեք, թե ինչպիսի եղանակներ կան: Քննարկեք, որոնք են ավելի հաճախ կիրառվում առօրյա կոնֆլիկտների լուծման ժամանակ:



Բանակցություն

Բանակցությունը կոնֆլիկտող կողմերի երկխոսություն է:


Այն կոնֆլիկտը լուծելու լավագույն և արդյունավետ եղանակն է :

Միջնորդություն

Միջնորդությունը բանակցային գործընթացի առանձին տեսակ է: Միջնորդության ժամանակ կոնֆլիկտի մասնակից կողմերը որոշում են ընդգրկել նաև երրորդ կողմին (միջնորդներ), որոնց դերը ոչ թե որոշումներ ընդունելն է, այլ օգնել վիճող կողմերին, քննարկումների միջոցով ինքնուրույն համաձայնության հասնել: Միջնորդը պարտավոր է լինել խելամիտ, գաղտնապահ, չեզոք, պատասխանատու, հանդուրժող, ինքնավստահ, ճշտապահ, ազնիվ:

Օրինակ՝

Արմենը չի ուզում հագնել իր վերարկուն, բայց մայրիկը գտնում է, որ դրսում շատ ցուրտ կլինի առանց վերարկուի: Մայրիկը զայրացած է, Արմենը համառուն է: Մայրիկը դիմում է հայրիկի օգնությանը: Հայրիկը Արմենին չի պաշտպանում, բայց փորձում է պարզել, թե ինչու



Արմենը չի ուզում վերարկուն հագնել:

- Այդ վերարկուն շատ նեղ է, ու ես չեմ կարող խաղի ժամանակ ազատ շարժվել:

Այնուհետև հայրիկը հարցնում է մայրիկին, թե ինչու է նա ստիպում Արմենին հագնել վերարկուն: Մայրիկը պատասխանում է, որ ինքն անհանգստանում է Արմենի առողջության համար: Հիմա վիճաբանության պատճառները երկու կողմի համար էլ պարզ են: Մայրիկը և Արմենը ինքնուրույն գտնում են պարզագույն լուծումը. Արմենը կարող է հագնել ուրիշ վերնագգեստ, որը շատ գեղեցիկ է ու տաք, ինչպես նաև բավականին հարմար է խաղալու համար: Փաստորեն, հայրիկի միջամտությունն իրոք օգնեց:

Դատարան

Դատարան՝ վերջնական և պարտադիր որոշման կայացման իրավասությամբ օժտված մարմին:

Երբեմն ուսուցիչը, տնօրենը կամ ծնողը կարող են ստանձնել «դատավորի» որոշում կայացնողի դեր, եթե կոնֆլիկտող կողմերը ինքնուրույն չեն կարողանում լուծել խնդիրը:

Օրինակ 1.

Ֆիզկուլտուրայի ժամ է, խաղում են գնդակով.

- Դու անարդար ես խաղում:
- Ո՛չ, այդպես չէ, իմ ոտքը դեռ գծի վրա է:
- Դու պետք է քո ոտքերը գծից այն կողմ դնես:
- Այդպես չէ:
- Այդպես է:
- Ընկե՛ր Պետրոսյան, Դուք որոշեք, թե մեզանից ով է ճիշտ:


Օրինակ 2.

Ամերիկյան դպրոցներից մեկում երեխաների մեծ մասը դպրոց է գալիս հեծանիվով: Հեծանվակայանում տեղերի քանակը սահմանափակ է: Ըստ կանոնի՝ ով առաջինն է գալիս, իրավունք ունի հեծանիվը ներսում կայանելու: Պարզվում է, որ 8-րդ դասարանի տղաները, երբ ուշացած են գալիս, ավելի փոքր երեխաների հեծանիվները դուրս են հանում և դրանց տեղում կանգնեցնում են իրենցը: Ցածր դասարանի աշակերտները բողոքում են: Սկզբում ուսուցիչը փորձում է կոնֆլիկտին լուծում տալ՝ որպես միջնորդ, բայց դա ոչ մի օգուտ չի տալիս: Դրանից հետո ուսուցիչը որպես դատավոր պատժում է տղաներին և որոշում, որ միայն այն երեխաները, որոնք շատ հեռու են ապրում, իրավունք ունեն օգտվել հեծանվակայանից:

Դասի ամփոփում

Դասի վերջում աշակերտների հետ քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ քննարկեցինք դասի ընթացքում (աշակերտները ներկայացնում են դասի ընթացքը):
- Ի՞նչ սովորեցիք այս դասից:
- Նշեք 1-2 բան, որ կարևոր էր ձեզ համար:



Դաս 5

«Կոնֆլիկտների կառավարում» թեմայի ամփոփում

Դասի նպատակն է կրկնել և ամրապնդել նախորդ 4 դասերի ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները:

Դասի ընթացքը

Դասարանը բաժանեք 4-5 աշակերտից բաղկացած խմբերի: Եթե աշակերտների թիվը մեծ է, կարող եք ձևավորել 2-3 խումբ՝ մյուս աշակերտներին վերագրելով դիտորդի կարգավիճակ:

Հանձնարարեք խմբերին մտածել կոնֆլիկտային իրավիճակներ և բեմականացնել դրանք:

Կոնֆլիկտային իրավիճակները բեմադրող երեխաների ուշադրությունը մեկ անգամ ևս հրավիրեք «Կոնֆլիկտների խաղաղ լուծման հմտություններ» և «Կոնֆլիկտների խաղաղ լուծման պատվիրաններ» պաստառների վրա: Առաջին խմբին առաջարկեք հնարավորինս խախտել խաղաղ լուծման հմտությունները՝ ավելի բացահայտ դարձնելու համար դրանց ազդեցությունը կոնֆլիկտների թեժացման վրա: Երկրորդ խմբին առաջարկեք ավելի ուշադիր լինել, հնարավորինս հետևել հմտություններին և պատվիրաններին:

Խմբերին տվեք 15րոպե ժամանակ պատրաստվելու համար:

Բեմականացումից հետո դիտորդների օգնությամբ ծավալեք քննարկումներ և առաջարկեք մատնանշել, թե կոնկրետ ո՞ր հմտությունները խախտվեցին, և ի՞նչը ավելի շատ նպաստեց, որպեսզի կոնֆլիկտը թեժանա:

Կարող եք նաև խմբերին հանձնարարել արդեն պատրաստի կոնֆլիկտային իրավիճակների բեմականացում և քննարկում:

Օրինակ՝

Քույր և եղբայր հեռուստացույց են ուզում նայել, եղբայրը ցանկանում է դիտել մուլտֆիլմ, իսկ քույրը՝ հեռուստասերիալ:


Առաջին խումբ՝ «Կոնֆլիկտի թեժացում»

Քույր և եղբայր հեռուստացույց են ուզում նայել, եղբայրը ցանկանում է դիտել մուլտֆիլմ, իսկ քույրը՝ հեռուստասերիալ: Անընդհատ փոխում են ալիքները և ոչ մի կերպ չեն կարողանում համաձայնության գալ: Սկսվում է ծեծկռտուք, փոխադարձ վիրավորանքներ, հիշում են դրվագներ նախորդ օրը տեղի ունեցած նմանատիպ վիճաբանության մասին, մեկը մյուսին ասում է՝ «հիմարի՛ մեկն էս», «դու մի՛շտ էլ այդպես ես վարվում», սպառնում են մեկը մյուսին՝ «ես այլևս քեզ իմ հեծանիվը չեմ տա...» կամ «մայրիկին կպատմեմ, որ երեկ դպրոցում քեզ վատ ես պահել ...» և այլն: Կոնֆլիկտն այնքան է թեժանում, որ ստիպված սկսում են միջամտել հայրիկը, մայրիկը, տատիկն և պապիկը: Ի վերջո հայրիկը զայրանում է՝ փոխելով հեռուստացույցի ալիքը, որտեղից ցույց են տալիս օրվա նորությունները: Վեճը շարունակվում է արդեն մյուս սեյնյակում. քույրը մեղադրում է եղբորը, իսկ եղբայրը՝ քրոջը...:

Մեկնաբանություն

Տվյալ դեպքում կոնֆլիկտը թեժացավ և դրական լուծում չունեցավ: Այստեղ երկու կողմերն էլ «պարտվեցին», ոչ մեկի ցանկությունը չիրականացավ, քանի որ նրանք չկարողացան համաձայնության գալ, գտնել խնդրի լավագույն լուծումը: Նրանք խախտեցին կոնֆլիկտների խաղաղ լուծման հմտությունները, կոնֆլիկտին միջամտեցին ծնողները, տատիկն ու պապիկը, և ի վերջո նրանք ստիպված եղան ենթարկվել հայրիկի որոշմանը, որը, բնականաբար, ոչ մի կողմի պահանջը չբավարարեց:

Դիտորդների միջոցով մատնանշեք խախտված հմտությունները: Օրինակ՝ մեկը մյուսին պիտակներ է կպցնում, երբ ասում է «հիմարի՛ մեկն էս», օգտագործում է «դու մի՛շտ էլ այդպես ես վարվում...» մեղադրանքը, «ես այլևս...» սպառնալիքը, հիշեցնում է անցած օրվա կոնֆլիկտը: Այս և մյուս հմտությունների խախտումն էլ հենց հանգեցրեց այս կոնֆլիկտի թեժաց-



մանր: Կոնֆլիկտի ելքը թելադրեց հայրիկը, ով, ստանձնելով «դատավորի» դեր, թելադրեց իր որոշումը, իսկ երեխաները, անկախ այն հանգամանքից, որ երկուսն էլ դժգոհ մնացին որոշումից, միևնույն է ստիպված էին ենթարկվել դրան:

Երկրորդ խումբ՝ «Կոնֆլիկտի խաղաղ լուծում»

Քույր և եղբայր հեռուստացույց են ուզում նայել, եղբայրը ցանկանում է դիտել մուլտֆիլմ, իսկ քույրը՝ հեռուստասերիալ: Քույրը սկսում է համոզել, որ այս կինոնկարից հետո եղբոր սիրած մուլտֆիլմն են ցուցադրելու, որ նրանք ֆիլմը դիտելուց հետո միասին կարող են դիտել նաև մուլտֆիլմը: Եղբայրը առարկում է, քանի որ համոզված է, որ մի սերիալից հետո կսկսվի հաջորդը, և քույրը ցանկություն կունենա դիտել նաև այն և ինքը նորից կզրկվի մուլտֆիլմ դիտելու հաճույքից: Քույրը առաջարկում է եղբորը (որպես զիջում) օգտվել իր համակարգից և խաղալ իր սիրած համակարգչային խաղը, մինչև սերիալը կավարտվի, բայց հետո անմիջապես հեռանալ համակարգչից և չխնդրել նորից խաղալու մասին: Այս պայմանով նրանք համաձայնության են գալիս և միասին որոշում, որ քույրը կնայի մի սերիալը, որից հետո եղբայրը կնայի մուլտֆիլմը:

Մեկնաբանություն

Տվյալ իրավիճակում կոնֆլիկտը խաղաղ լուծում ստացավ, որովհետև նրանք երկուսն էլ ինչ որ բան զիջեցին և եկան փոխադարձ համաձայնության, երկու կողմերն էլ բավարարված են, երկու կողմերն էլ իրենց հաղթանակած են զգում:

Երրորդ խումբ՝ «Կոնֆլիկտի լուծում մեկի հաղթանակով»

Քույր և եղբայր հեռուստացույց են ուզում դիտել, եղբայրը ցանկանում է դիտել մուլտֆիլմ, իսկ քույրը՝ հեռուստասերիալ: Քույրը սկսում է համոզել, որ այս կինոնկարից հետո եղբոր սիրած մուլտֆիլմն են ցուցադրելու, որ նրանք ֆիլմը դիտելուց հետո միասին կարող են դիտել նաև մուլտֆիլմը: Եղբայրը չի համաձայնվում և սկսում է բարձրաձայն ու աղիողորմ լաց լինել: Անհանգստացած ներս են մտնում մայրիկը, տատիկը, հետո նաև պապիկն ու հայրիկը: Նրանք աշխատում են հանգստացնել լացող երեխային՝ խոստանալով քաղցրավենիք գնել, այգի տանել, խաղալիք գնել և այլն: Սակայն եղբայրը շարունակում է լացն ու պահանջում միացնել հեռուստացույցի այն ալիքը, որով իր մուլտֆիլմն են ցուցադրում: Քույրը մեծերի մեղադրող հայացքների ներքո փոխում է ալիքը և հեռանում սենյակից: Նա դժգոհությամբ նստում է գրասեղանի մոտ՝ փորձելով դասերը պատրաստել, բայց երկար ժամանակ կոնֆլիկտի տպավորությունը խանգարում է նրան կենտրոնանալ ու լուծել առաջադրված խնդիրը: Մի կերպ դասերի պատրաստումը ավարտելուց հետո նա շտապում է մտնել անկողին, բայց քնել չի հաջողվում. շատ է վրդովված: Նա անընդհատ մտածում է. «Ի՞նչ կարելի է անել ամեն օր կրկնվող այս խնդրին վերջնական լուծում տալու համար: Գուցե մի փոքրիկ գումա՞ր խնայի ու եղբոր համար մուլտֆիլմերի սկավառակներ գնի: Այդ դեպքում եղբայրը ցանկացած ժամանակ կկարողանա իր սիրած մուլտֆիլմերը դիտել համակարգչով: Սա կարծես թե լավ միտք է...», մտածում է քույրն ու խաղաղված քնում:

Մեկնաբանություն

Տվյալ իրավիճակում կոնֆլիկտը լուծվեց եղբոր հաղթանակով: Քույրը զիջեց նրան, կատարեց նրա պահանջը՝ հաշվի առնելով նրա տարիքը: Սակայն պարտության զգացումը և այն, որ իր ցանկությունը չի կատարվում, խիստ անհանգստացնում ու խանգարում էր նրան:

Եզրակացնելով՝ կարելի է ասել, որ կոնֆլիկտի խաղաղ լուծում, որը կբավարարի երկու կողմին էլ, գրեթե միշտ կարելի է գտնել: Իհարկե, որոշ դեպքերում դա կարող է կապված լինել լուրջ դժվարությունների հետ, սակայն միայն այդ դեպքում է, որ երկու կողմն էլ կարող են իրենց լիարժեք հանգիստ զգալ և այլևս չմտածել կատարվածի մասին:

Ամփոփեք դասը՝ առաջարկելով երեխաներին մեկ անգամ ևս նշել այն հմտությունները, որոնք իրենք սովորաբար կիրառում են կոնֆլիկտների ժամանակ կամ այսուհետ անպայման կկիրառեն:

«Կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» հավասարը հավասարին ուսուցման եղանակով

«Կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» ծրագրին ակտիվ մասնակցություն ցուցաբերած աշակերտներին կարելի է հանձնարարել նախապատրաստվել և հավասարը հավասարին ուսուցման եղանակով դաս անցկացնել՝ փոխանցելով դասողեկական հանդիպման ժամերի ընթացքում կոնֆլիկտների կառավարման բնագավառում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները: Փորձը ցույց է տվել, որ նման մոտեցումը չափազանց օգտակար է ինչպես «ուսուցչի դերում» հանդես եկող աշակերտների, այնպես էլ այն աշակերտների համար, ովքեր սովորում են իրենց հասակակիցներից: Այն մեծապես նպաստում է դպրոցներում խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման մշակույթի տարածմանը: Դասերը կարելի է անցկացնել ինչպես նույն դպրոցի, այնպես էլ հարևանությամբ տեղակայված դպրոցների աշակերտների համար:

Հավասարը հավասարին եղանակով դասի անցկացման սցենար

(դասը կարելի է անցկացնել նախապես վերապատրաստված աշակերտների 2-3 աշակերտներից բաղկացած խմբի միջոցով՝ յուրաքանչյուրին վերագրելով համապատասխան դերակատարություն)

Բարև ձեզ, ես _____-ն եմ, սովորում եմ թիվ __ դպրոցի __-րդ դասարանում (ներկայանում եմ խմբի բոլոր աշակերտները):


Դասավանդող աշակերտ 1 - Այսօր մենք ցանկանում ենք մի փոքր պատմել, թե ինչ ենք սովորել դասողեկական հանդիպման ժամերին կոնֆլիկտների կառավարման վերաբերյալ, սովորեցնել, թե ինչպես կարելի է խաղաղ ճանապարհով լուծել այն կոնֆլիկտները, որոնց մենք հանդիպում ենք դպրոցում, տանը կամ փողոցում, կիսել ձեզ հետ մեր ունեցած գիտելիքներն ու հմտությունները, պատասխանել ձեզ հետաքրքրող հարցերին:

Դասավանդող աշակերտ 2 - Նախ սկսենք նրանից, որ այդ մի քանի դասերը, որոնք մենք անցկացրինք դասողեկական հանդիպման ժամերի ընթացքում, շատ էին տարբերվում մեր սովորական դասերից: Տարբերվում էին նրանով, որ մենք այդ դասերի ընթացքում քննարկում էինք մեր առօրյա կոնֆլիկտներին վերաբերող հարցեր, սովորում, թե ի՞նչ է կոնֆլիկտը, ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ, ինչպե՞ս է զարգանում, և ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ մեր վարվելակերպը կոնֆլիկտի ժամանակ, ի՞նչ է անհրաժեշտ անել, որպեսզի կոնֆլիկտը չթեժանա, ի՞նչ անել, որպեսզի կոնֆլիկտը լուծվի խաղաղ ճանապարհով, և մենք ստիպված չլինենք մեզ համար շատ կարևոր ինչ-որ բան զիջել կամ դիմացինի իրավունքներն ու արժեքները ոտնահարել:

Դասավանդող աշակերտ 3 - Այս ամենը սովորելու ժամանակ մեզ տանը հանձնարարություններ չէին տալիս, ամեն ինչ սովորում էինք դասարանում, ակտիվորեն մասնակցում դասին, առաջարկություններ անում և քննարկումներ ծավալում:

Դասերի ժամանակ մենք միասին վերլուծում էինք մեր դասարանում և դպրոցում տեղի ունեցած կոնֆլիկտները, համատեղ ուժերով փորձում գտնել դրանց խաղաղ լուծումները: Ես մեկ անգամ ևս համոզվեցի, որ շատ հաճախ մենք կոնֆլիկտի մեջ ենք մտնում այն պատճառով, որ զայրացած ենք կամ ինչ-որ բանից բորբոքված: Իսկ եթե հենց սկզբից փորձեինք լսել և հասկանալ մեր դիմացինին, լինեինք մի փոքր ավելի հանդուրժող, ապա հնարավոր կլիներ խուսափել շատ տհաճություններից:

Վերոհիշյալ եղանակով ուսուցում անցկացվել է Շիրակի մարզի 18 դպրոցների ավելի քան 3500 դպրոցականների շրջանում՝ արձանագրելով գերազանց արդյունքներ ինչպես այդ դասերը վարող, այնպես էլ դասերին մասնակից աշակերտների համար: (Տես Գնահատման հաշվետվություն «Խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթության ազդեցության գնահատումը դպրոցականների վրա ուսուցումից մի քանի տարի անց», Հայաստան, Գյումրի 2010)



Դասավանդող աշակերտ 1- Նախ փորձենք սահմանել, թե ի՞նչ է կոնֆլիկտը ձեր կարծիքով, կամ ի՞նչ եք դուք հասկանում կոնֆլիկտ ասելով:

Չանձնարարություն *Ուշադիր լսեք բոլոր աշակերտների կարծիքները, անփոփեք դրանք, աշակերտներին ներկայացրեք նաև կոնֆլիկտի հետևյալ սահմանումը.*

Կոնֆլիկտը մրցակցության ձև է, որը ծագում է, երբ երկու կամ ավելի թվով մարդիկ կամ մարդկանց խմբեր ունենում են իրականում անհամատեղելի կամ թվացյալ անհամատեղելի նպատակներ:

Չանձնարարություն խմբին՝ *Չարցեր տվեք երեխաներին և փորձեք պարզել, թե ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ կոնֆլիկտը և ի՞նչ գիտեն նրանք կոնֆլիկտի դրական ազդեցության մասին: Անփոփեք նրանց կարծիքները:*

Դասավանդող աշակերտ 2.- Ես կփորձեմ Ձեզ ներկայացնել կոնֆլիկտների խաղաղ լուծման մի քանի պարզ պատվիրաններ, որոնք սովորել են մեր դասերի ընթացքում: Իմ կարծիքով, եթե բոլոր մարդիկ իմանան և կարողանան հետևել դրանց, ապա շատ կոնֆլիկտներ հնարավոր կլինեն խաղաղ լուծել:

Նայեք խնդրեմ «Կոնֆլիկտների խաղաղ լուծման պատվիրաններ» պաստառին: Այստեղ պատկերված է կոնֆլիկտ. մարդուկները վիճում են, ծեծկռտուք է, սակայն վերջում՝ ընդամենը 5 քայլից հետո, նրանք արդեն հաշտվել են: Տեսնենք, թե ի՞նչ 5 քայլեր են, որոնք անցնելով մարդուկները կարողացան հաշտվել և կոնֆլիկտը լուծել խաղաղ ճանապարհով: Ահա դրանք.

1. Փորձիր վերլուծել իրավիճակը
2. Աշխատիր հասկանալ դիմացինին
3. Կարողացիր ուշադիր լսել
4. Չարցեր տու՛ր
5. Փորձիր գտնել խնդրի լավագույն լուծումը,

Առանձին- առանձին փորձենք հասկանալ նշված քայլերից յուրաքանչյուրը.
Դասավանդող աշակերտ 3. (կարդալ պատվիրանը և մեկնաբանել)

1. Փորձիր վերլուծել իրավիճակը

Մինչև հակառակ կողմին որևէ հարցում (օրինակ՝ ընկերոջ պայմանավորված ժամից ուշացել է) մեղադրելը, ուշադիր վերլուծիր իրավիճակի հնարավոր բոլոր մանրամասները, փորձիր հասկանալ, թե օրինակ ի՞նչը կարող էր ստիպել ընկերոջդ նման քայլ անելու կամ քեզ հետ կոպիտ խոսելու կամ ժամադրությունից ուշանալու և այլն: Գուցե՞ այդ դեպքում մինչև ընկերոջդ վրա ձայնդ բարձրացնելը կնկատես, որ նրա աչքերը արցունքոտված են և հետևություն կանես, որ ուշանալու համար նա լուրջ պատճառներ է ունեցել...:


Դասավանդող աշակերտ 1. (կարդալ պատվիրանը և մեկնաբանել)

2. Աշխատիր հասկանալ դիմացինին

- Երևակայիր, որ դու վեճի հակառակ կողմում ես և քեզ պատկերացրու այդ մարդու փոխարեն:
- Ինչպե՞ս է քո կարծիքով նա տեսնում այդ պրոբլեմը:

Չիշիր, որ հասկանալ դիմացին դեռ չի նշանակում համաձայնվել նրա հետ:

Մի՛ հրաժարվիր քո ընկալումից, բայց փորձիր հակառակ կողմի հետ զրույցի միջոցով նոր ձևով ընկալել պրոբլեմը:





Դասավանդող աշակերտ 2. (կարդալ պատվիրանը և մեկնաբանել)

3. Կարողացիր ուշադիր լսել

- դա օգնում է դիմացինի մասին ավելի շատ տեղեկություններ ստանալ;
- բավարարում է նրանց լսված լինելու զգացումը;
- օգնում է, որպեսզի նրանք հավատան, որ դուք իրենց հասկանում եք;
- այդ դեպքում ավելի հավանական է, որ ձեզ էլ կլսեն;
- վիճաբանության շղթան կկտրվի, և հարաբերությունները կբարելավվեն:

Լսելու ժամանակ պետք չէ ինքնապաշտպանությամբ զբաղվել կամ խորհուրդներ տալ («դու սխալ ես վարվում, բերածդ փաստերը սխալ են...», «համաձայն եմ, բայց իմ մեղքով չի եղել...», «...ախր դա այնքան պարզ էր, որ դու պետք է իմանայիր...»)

Դասավանդող աշակերտ 3. (կարդալ պատվիրանը և մեկնաբանել)

4. Հարցեր տուր

- դիմացինի կարծիքն իմանալու;
- պակասող տեղեկություններ ստանալու;
- հակառակ կողմին ցույց տալու համար, որ իրեն լսում ես:

Կան հարցեր, որոնք օգնում են, որպեսզի զրույցը շարունակվի, օրինակ՝ «Երբ ասացիք, որ.....ի՞նչ նկատի ունեիք» կամ «Ես կուզեմայի իմանալ Ձեր կարծիքը այդ հարցի մասին.....», «Ի՞նչը Ձեզ դրդեց, որ այդպես վարվեցիք...» և այլն:

Կան հարցեր, որոնք խանգարում են, որպեսզի զրույցը շարունակվի, դրանք այն հարցերն են, որոնց պատասխանը «այո» կամ «ոչ» է, կամ այնպիսի հարցեր, որոնք պարունակում են նաև պատասխան՝ «Չե՞ս կարծում արդյոք, որ ավելի ճիշտ կլինեն, եթե...» և այլն: Աշխատեք հնարավորինս քիչ օգտագործել նման հարցերը:

Հարցերը տվեք ինչ-որ բան իմանալու, այլ ոչ թե դիմացինին համոզելու նպատակով:

Դասավանդող աշակերտ 1. (կարդալ պատվիրանը և մեկնաբանել)


5. Փորձիր գտնել խնդրի լավագույն լուծումը

- որի դեպքում ձեզանից ոչ մեկը իրեն չզգա նվաստացած և ստիպված չլինի իր համար իսկապես կարևոր ինչ որ մի բան զիջել:

Հավատացե՛ք, որ միշտ կարելի է գտնել այնպիսի ելք, որի դեպքում դուք կսկսեք ավելի լավ հասկանալ մեկը մյուսին:

Դասավանդող աշակերտ 2. – Կան կոնֆլիկտների լուծման մի քանի եղանակներ՝ բանակցությունների անցկացում, միջնորդություն կամ երրորդ անձի միջամտություն և դատարան: Նայե՛ք խնդրեն «Կոնֆլիկտների խաղաղ լուծման եղանակներ» պատասխանին:

Կոնֆլիկտների խաղաղ լուծման ամենարդյունավետ եղանակներից մեկը բանակցելն է, երբ կոնֆլիկտող կողմերը նստում են դեմ դիմաց և քննարկում վիճելի հարցը, համբերությամբ լսում են մեկը մյուսի բացատրությունները և փորձում գտնել լավագույն՝ այսինքն երկուսին էլ բավարարող լուծում: Բանակցություններ վարելիս կիրառվում են կոնֆլիկտների խաղաղ լուծման պատվիրանները, որոնք են՝ **փորձիր վերլուծել իրավիճակը, աշխատիր հասկանալ դիմացինին, կարողացիր ուշադիր լսել, հարցեր տուր, փորձիր գտնել խնդրի լավագույն լուծումը:**



Դասավանդող աշակերտ 3 - Երկու անձանց կամ խմբերի միջև ծագած կոնֆլիկտները խաղաղ լուծելու համար շատ կարևոր է նաև, երբ մի երրորդ անձ միջամտում և օգնում է, որ կոնֆլիկտը լուծվի: Այդպիսի անձը կոչվում է միջնորդ: Միջնորդ կարող է լինել այն մարդը, որին լավ են ճանաչում և հարգում երկու կողմն էլ (կարողալ միջնորդի հատկանիշները, որոնք նշված են պաստառի վրա): Ուշադրություն դարձրեք այն փաստին, որ միջնորդը որոշումներ չի ընդունում, այլ օգնում է կոնֆլիկտի երկու կողմերին հանդիպել ու սկսել բանակցությունները:

Դասավանդող աշակերտ 1 - Կոնֆլիկտների խաղաղ լուծման հաջորդ եղանակը դատարանին դիմելու եղանակն է: Դատարանի որոշումը պարտադիր է կոնֆլիկտող կողմերի համար: Այս եղանակը կիրառվում է բնականաբար ավելի լուրջ բնույթ ունեցող կոնֆլիկտների լուծման ժամանակ, երբ կոնֆլիկտող կողմերը չեն կարողանում ինքնուրույն լուծումներ գտնել կամ տվյալ կոնֆլիկտն արդեն ենթադրում է իրավական միջամտություն: Դպրոցում կամ առօրյա կյանքում, իհարկե, նման բան հազվադեպ է հանդիպում, սակայն, օրինակ, եթե աշակերտների մեջ առաջացել է որևէ լուրջ կոնֆլիկտ, և նրանք ինքնուրույն չեն կարողանում լուծել այն ու դիմում են դատաբանին, ուսուցչին կամ դպրոցի տնօրենին, ապա այս դեպքում վերջիններիս որոշումը կատարելը պարտադիր է 2 կողմի համար էլ: Այսինքն՝ այստեղ ուսուցիչը կամ դպրոցի տնօրենը ստանձնում են «դատավորի» դեր:

Դասավանդող աշակերտ 2.


Իսկ ի՞նչ պետք է անել, որպեսզի կոնֆլիկտ չառաջանա, կամ ի՞նչ անել, որպեսզի կոնֆլիկտը չզարգանա:

Ցանկացած, նույնիսկ աննշան առիթով առաջացած կոնֆլիկտ կարող է զարգանալ, եթե մենք պատասխանատվություն չենք կրում մեր խոսքերի, մեր շարժումների և ընդհանրապես մեր պահվածքի նկատմամբ: Գոյություն ունեն հմտություններ, որոնք կիրառելու դեպքում հնարավոր կլինի դադարեցնել կոնֆլիկտի զարգացումը: (Պաստառ՝ «Կոնֆլիկտների խաղաղ լուծման հմտություններ»)

Հանձնարարություն դասավանդող խմբին՝ կարդալ յուրաքանչյուր հմտությունը և մեկնաբանել կամ առաջարկել աշակերտներին հերթով մոտենալ պաստառին, կարդալ ամեն մի հմտությունը և մեկնաբանել:

- Պատասխանատվություն կրե՞ք ձեր պահվածքի, ձեր մտքերի և ձեր զգացմունքների համար (օր.՝ եթե դուռը շրխկացնելով դուրս ես գալիս, ապա դժվար է պատկերացնել, որ ձեր վեճը շուտ կավարտվի...);
- Աշխատե՞ք ինչքան հնարավոր է, որպեսզի հակառակորդ կողմի պահվածքը չթելադրի ձեր սեփական պահվածքի ձևը (օր.՝ եթե վեճի ժամանակ դիմացինը գոռում է, աշխատեք չգոռալ, ընդհակառակը խոսեք ինչքան հնարավոր է հանգիստ ձայնով...);
- Հիշե՞ք, որ ցանկացած մարդ ունի ընտրության իրավունք և կարող է վարվել իր սեփական հայացքներին և ընկալումներին համապատասխան՝ անկախ այն բանից, թե ինչպես են պահում իրենց մյուսները;
- Արտահայտե՞ք ձեր զգացմունքներն առանց ահաբեկումների (օր.՝ Դու դեռ կփոշմանես, ես քեզ ցույց կտամ կամ դեռ սպասիր, հետո կտեսնես և այլն);
- Պետք չէ՞ ընդլայնել վիճելի հարցը, խոսե՞ք կոնկրետ խնդրի մասին; (օր.՝ եթե խնդիրը վերաբերվում է այսօր կորած գրիչին, մի՛ հիշեք անցյալ տարվա գիրքը...);
- Պետք չէ՞ հղումներ անել այլ մարդկանց կամ հեղինակությունների վրա (օր.՝ Հակոբը երբեք այդպես չէր վարվի...);
- Մի՛ օգտագործեք «միշտ» և «երբեք» բառերը (օրինակ՝ Դու մի՛շտ էլ այդպիսին ես եղել, ես երբեք այլևս քեզ հետ ընկերություն չեմ անի...);




- 
- «Պիտակներ» մի՛ կպցրեք այլ մարդկանց (օր.՝ վեճի ժամանակ տարբեր կենդանիների անուններով դիմել հակառակ կողմին) ;
 - «Տաք» գլխով որոշումներ մի՛ կայացրեք, սպասե՛ք մինչև կրքերը մի փոքր կհանդարտվեն:

Հանձնարարություն դասավանդող խմբին՝ հատուկ նշել, որ այս հմտություններն ավելի գործուն կլինեն, եթե դրանք պահեն կոնֆլիկտի մեջ ներգրավված բոլոր կողմերը, հակառակ դեպքում, եթե մի կողմը անընդհատ խախտում է դրանք, ապա շատ դժվար կլինի հասնել կոնֆլիկտի խաղաղ լուծման:

Հանձնարարություն խմբին՝ աշակերտներից առանձնացրեք 3-5 աշակերտներից բաղկացած երկու խումբ, (մյուսները կարող են լինել դիտորդներ): Հանձնարարե՛ք խմբերին պատրաստել բեմականացումներ միևնույն կոնֆլիկտային իրավիճակի սցենարով՝ մի խմբի մոտ խաղաղ, մյուս խմբի մոտ կոնֆլիկտի թեժացման ելքով: Խմբերին տվեք 15 րոպե ժամանակ կոնֆլիկտային իրավիճակ մշակելու և բեմականացում պատրաստելու համար: Այնուհետև դիտեք բեմականացումները և ծավալեք քննարկումներ: (Կարելի է օգտագործել Դաս 5-ում նշված պատրաստի օրինակները):

Ամփոփել դասը, հարցեր տալ

- Ի՞նչ սովորեցիք այս դասից;
- Նշեք մեկ- երկու բան, որ շատ հետաքրքրեց ձեզ;
- Կոնֆլիկտների լուծման, որ հմտությունը կամ հմտությունները ավելի շատ դուր եկան ձեզ, և կկարողանաք արդյո՞ք կիրառել դրանք առօրյա կյանքում:



ՄԱՍ 2


«Խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» ձեռնարկի հիման վրա անցկացված դասընթացական հանդիպման ժամերի օրինակներ

2009-2010 ուսումնական տարվա ընթացքում Շիրակի մարզի ավելի քան 10 դպրոցների մոտ 30 ուսուցիչներ անցկացրեցին խաղաղության թեմաներով դասընթացական հանդիպման ժամեր՝ կիրառելով «Կանայք հանուն զարգացման» ՀԿ-ի կողմից մշակված «Խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» ձեռնարկը:

Անցկացված բոլոր դասերը տարբերվում էին մեկը մյուսից: Ուսուցիչների գերակշռող մեծամասնությունը ստեղծագործաբար և մեծ սիրով էր մոտեցել խաղաղության դասերի կազմակերպման խնդրին: Նրանց հաջողվեց դասերի միջոցով երեխաների մոտ ձևավորել խաղաղության և դրա կարևորության գաղափարը, սովորեցնել ի՞նչ է հանդուրժողականությունը, որո՞նք են կոնֆլիկտների առաջացման հիմնական պատճառները, տալ տարրական գիտելիքներ և հմտությունների կոնֆլիկտների խաղաղ լուծման վերաբերյալ:

Սիրելի ուսուցիչներ, ձեր ուշադրությանը ներկայացվող գրքույկի մեջ տեղ են գտել տարբեր դպրոցներում դասընթացների կողմից մշակված հանդիպման ժամերի օրինակներ, որոնք արդեն իսկ հաջողությամբ փորձարկվել են: Կարծում ենք, որ դրանք կիրառելի կլինեն նաև ձեր դպրոցներում:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր շահառու դպրոցների տնօրեններին, փոխտնօրեններին, «Խաղաղության ուսուցման» կենտրոնների պատասխանատու ուսուցիչներին, դասընթացներին խաղաղության դասերի նկատմամբ ցուցաբերած մեծ հետաքրքրության և պատասխանատու վերաբերմունքի համար:



Հանդիպման ժամի թեման`

Կոնֆլիկտ սերունդների միջև (հայրեր և որդիներ)

Նպատակը`

- Ձևավորել հարգանք ծնողների նկատմամբ,
- Պարզել այն պատճառները, որոնք կոնֆլիկտներ են առաջացնում ծնողների և երեխաների միջև,
- Ձարգացնել փոխըմբռնման և փոխհամաձայնության/կոմպրոմիսի մշակույթ:

Հանդիպման ժամի ընթացքը

Կազմել հարցաթերթիկներ և դասղեկի ժամի նախօրեին տալ դրանք աշակերտներին: Հարցաթերթիկի մեջ կարելի է ընդգրկել հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է կոնֆլիկտը:
- Ի՞նչ է փոխհամաձայնությունը/կոմպրոմիսը:
- Երբևէ կոնֆլիկտի մեջ մտե՞լ եք ձեր ծնողների հետ:
- Ձեզանից ո՞վ է սովորաբար նման իրավիճակներում առաջինը գնում փոխզիջման՝ դու՞ք, թե՞ ձեր ծնողները:
- Ձեր ծնողները ձեզ հասկանու՞մ են:
- Ի՞նչն է ավելի հաճախ կոնֆլիկտի պատճառ դառնում:
- Դուք հաճախ եք ներողություն խնդրում ծնողներից, եթե սխալ եք: Իսկ ծնողներ՞ը...:
- Դուք հաճախ եք ծնողների հետ միասին վերլուծում կոնֆլիկտի առաջացման պատճառները, թե՞ գերադասում եք չխոսել այդ մասին:
- և այլն

Աշակերտներին հանձնարարվում է պատրաստվել և հանդիպման ժամին բեմականացնել/ներկայացնել ծնող - երեխա առավել հաճախ հանդիպող կոնֆլիկտային իրավիճակների օրինակներ:

Դասղեկը իր ներածական խոսքում ասում է՝ «Ծնողների և երեխաների միջև բոլոր ժամանակներում էլ կոնֆլիկտներ են առաջանում: Այս հիմնախնդիրը կա բոլոր ժողովուրդների մոտ: Ծնողները մի սերնդի ներկայացուցիչներ են, իսկ երեխաները՝ մեկ ուրիշ: Նրանք ունեն տարբեր կարծիքներ, տարբեր համոզմունքներ նույն հարցերի վերաբերյալ, տարբեր դիրքորոշումներ և տարբեր արժեքային համակարգեր: Այս բոլորը բերում է կարծիքների բախման, իրար չհասկանալու, կոնֆլիկտների:

Եվ այսպես՝ կոնֆլիկտ ծնողների ու երեխաների միջև: Մենք կփորձենք պարզել, թե ինչպիսի՞ կոնֆլիկտներ են հիմնականում առաջանում ձեր և ձեր ծնողների միջև, որո՞նք են այդ կոնֆլիկտների առաջացման հիմնական պատճառները, ինչպե՞ս եք դուք փորձում լուծել դրանք, ինչպե՞ս դուրս գալ այդ իրավիճակից հնարավորինս «փոքր կորուստներով»: Սա մեր այսօրվա զրույցի հիմնական թեման է...»:

Քննարկել նախորդ օրը տրված հարցաթերթիկի հարցերը, լսել բոլորի պատասխաններն ու կարծիքները, երեխաների միջոցով գալ եզրահանգումների, սահմանել կոնֆլիկտ և փոխհամաձայնություն հասկացողությունները:

Երեխաները կարող են տալ բազմաթիվ սահմանումներ:





Օրինակ՝

Կոնֆլիկտը հակամարտություն է, որի ընթացքում կողմերը ձգտում են հասնել իրենց ցանկացած արդյունքին, ձեռք բերել որոշակի արժեքներ՝ ուրիշների հետաքրքրությունների ճնշման միջոցով:

Փոխհամաձայնությունը/Կոնպրոմիսը կոնֆլիկտից դուրս գալու եղանակ է, երբ երկու կողմն էլ պատրաստ է զիջման:

Երեխաների հետ քննարկել նաև կոնֆլիկտների առաջացման պատճառները, լսել նրանց կարծիքներն ու տալ կոնֆլիկտների առաջացման հիմնական պատճառները՝

- Միջոցների սահմանափակություն
- Արժեքների տարբերություն
- Ընկալումների տարբերություն
- Տեղեկատվության պակաս
- Հիմնական պահանջումների բավարարված չլինելը*

Շարունակել քննարկումը՝ տալով հետևյալ հարցերը.

- Մի՞շտ է արդյոք անխուսափելի կոնֆլիկտը:
- Ինչպե՞ս կարելի է խուսափել դրանից:
- Ի՞նչ է անհրաժեշտ անել դրա համար:
- Ի՞նչ վարքագիծ ընտրել դրա համար:

Եկե՛ք տեսնենք, թե ինչպես է լինում իրական կյանքում:

Երեխաներին հանձնարարել բաժանվել երկու խմբի՝ «Ծնողներ» և «Երեխաներ»: Բացատրել, որ յուրաքանչյուր խումբը պաշտպանում է իր իրավունքները և կոնֆլիկտների լուծմանը նայում է իր խմբի տեսանկյունից:

Աշակերտները ներկայացնում են կոնֆլիկտային իրավիճակների օրինակներ և բեմականացնում դրանք:

Իրավիճակ 1

Դուստրը դպրոցում շատ վատ է սովորում: Մայրիկին դպրոց են կանչել: Դպրոց այցելելուց հետո տեղի է ունենում ոչ այնքան հաճելի խոսակցություն մոր և աղջկա միջև:

Կոնֆլիկտային իրավիճակի քննարկում, կոնֆլիկտող կողմերի վարքագծի գնահատում, ինչպե՞ս պետք է վարվեն հենց սկզբից մայրը և դուստրը, որպեսզի կոնֆլիկտ չառաջանար և այլն: Լսում են «Ծնողներ» և «Երեխաներ» կարծիքները: Թե՛ «Ծնողները», թե՛ «Երեխաները» փնտրում են ելքեր կոնֆլիկտային իրավիճակից:

Իրավիճակ 2


Որդին տուն է վերադարձել գիշերվա ժամը 2-ին: Ծնողները խիստ զայրացած են: Պահանջում են բացատրություն:

Իրավիճակ 3

Աղջիկը պահանջում է ծնողներից գնել մոդայիկ ու թանկարժեք իր: Ծնողները բացատրում են, որ չեն կարող, քանի որ միջոցներ չունեն:



* Որպես լրացուցիչ նյութ ուսուցիչը կարող է ծանոթանալ «խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» ուսուցչի համար նախատեսված ձեռնարկի «Ի՞նչ է կոնֆլիկտը» (Դաս 2, էջ 19) և «Կոնֆլիկտի առաջացման պատճառներ» (Դաս 4-5, էջ 23) թեմաներին



Իրավիճակ 2-ը և 3-ը նույնպես քննարկվում են առաջին իրավիճակի նմանությամբ:

Երկու կողմերն էլ փորձում են գտնել կոնֆլիկտից դուրս գալու ելքեր, երեխաները առաջարկում են լուծումների տարբերակներ:

Այստեղ երեխաների ուշադրությունը կարելի է ուղղել այն բանին, որ անգամ ամենաբարդ իրավիճակներից կարելի է ելք գտնել, յուրաքանչյուր խնդիր կարելի է լուծել, քանի դեռ այն չի վերածվել բացահայտ կոնֆլիկտի: Միայն անհրաժեշտ է փորձել դիտարկել իրավիճակը ոչ միայն երեխայի, այլ նաև ծնողի դիրքերից, հասկանալ նրանց, լսել նրանց փաստարկները:



«Ծնողներին չեն ընտրում» ասացվածքը ամեն դեպքում շատ ճիշտ է: Դուր է գալիս ձեզ, թե ոչ, սակայն դուք պարտավոր եք հարգել ձեր ծնողներին և միևնույն ժամանակ հարգված լինել ծնողների կողմից: Մինչև չափահաս տարիքը դուք պետք է ապրեք ձեր ծնողների հետ* և շատ ավելի լավ կլինի փորձել հասկանալ միմյանց, անել այնպես, որ բոլոր տարածայնություններն ու կոնֆլիկտները լուծում ստանան փոխադարձ համաձայնության միջոցով:

«Ծնողների» և «Երեխաների» խմբին հանձնարարել մշակել որոշակի կանոններ, որոնք կօգնեն դուրս գալ կոնֆլիկտային իրավիճակից: Օրինակ, նրանք կարող են ներկայացնել հետևյալ կանոնները.

1. Նախ և առաջ փորձեք ձայնը չբարձրացնել վեճի ժամանակ՝ դա ոչ մի արդյունքի չի հասցնի, բացի ծնողների վրդովմունքից: Բացի այդ, շատ հանգիստ ու վստահ ասված բառերը ավելի շուտ կընկալվեն ծնողի կողմից:

2. Հիշե՛ք, որքան էլ ծնողների վարքագիծը ձեզ անարդարացի թվա, միևնույն է նրանք միշտ ցանկանում են, որ իրենց երեխայի մոտ ամեն ինչ լավ լինի: Երբեմն իհարկե պատահում է, որ չեն կարողանում հիմնավորել կամ ձեզ «հասկանալի լեզվով» բացատրել իրենց պահանջները կամ ցանկությունները, սակայն միևնույն է նրանք ձեզ շատ են սիրում: Փորձե՛ք հասկանալ նրանց:

Երեխաներին ներկայացրեք Կոնֆլիկտների խաղաղ լուծման հմտություններն ու պատվիրանները*:

Վերջնական բլից-հարցում.

- Իմ հարաբերությունները ծնողներիս հետ կլավանան, եթե...
- Ես այլևս չեմ վիճելու ծնողներիս հետ ինչ-որ... համար
- Ծնողների հետ հարաբերություններում չի կարելի ...
- Ծնողները երբեք պետք է չանեն...
- Իդեալական ծնողներ ես համարում եմ նրանց, ովքեր...
- և այլն

*Գյուլնրու Վ. Թեքեյանի անվ. թիվ 2 դպրոցի
2009-2010 ուս. տարվա 10-րդ դասարանի
դասղեկ, հայոց լեզու և գրականություն
առարկայի ուսուցչուհի
Անահիտ Ջուլիակյան*

* Բնականաբար կան տարբեր դեպքեր, երբ ծնողը զրկված է ծնողական իրավունքից և այլն, ուսուցիչը պետք է շատ ուշադիր լինի, իմանա՞ր որոյո՞ք նման ընտանիքների երեխաներ կան իր դասարանում թե՞ ոչ և քննարկման ժամանակ չափազանց ուշադիր լինի, որ նման երեխան բարոյական վնաս չկրի

* Տե՛ս «խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» ձեռնարկի «Կոնֆլիկտների խաղաղ լուծման հմտություններ, և պատվիրաններ» թեմաները (Դաս 13, 14, էջ 52-54)



**Հանդիպման ժամի թեման՝
Խաղաղության խորհրդանիշերը:
Զինված հակամարտության ներգործությունը
երեխաների զարգացման վրա**

Նպատակը

Աշակերտները

- կհմանան խաղաղության խորհրդանիշերի մասին,
- կհասկանան պատերազմի կործանարար ազդեցությունը երեխայի զարգացման վրա,
- կարտահայտեն սեփական տեսակետները պատերազմների կործանարար հետևանքների մասին,
- կհմանան Սադակոյի և հազար թղթե կռուկների մասին պատմությունը:

Հանդիպման ժամի ընթացքը

Դասղեկն իր ներածական խոսքում ասում է, որ այսօր առավել քան երբևէ, մարդիկ ամբողջ աշխարհում ցանկանում են խաղաղություն, քանի որ աշխարհի տարբեր ծայրերում տեղի ունեցող պատերազմները, բախումները, ահաբեկչական գործողությունները սպառնում են խաղաղությանը: Մարդիկ դարեր շարունակ ունեցել են խաղաղության իրենց խորհրդանիշերը, որոնք ներկայացվել են գույների, բույսերի, կենդանիների, երաժշտության միջոցով:

Փորձել հարցերի միջոցով բնութագրել խաղաղությունն ըստ երեխաների:

Հարց. Ի՞նչ բառերով կարելի է բնութագրել խաղաղությունը: Հանձնարարել երեխաներին գրել այդ բառերը գրատախտակին:


- Բարեկամություն
- Եղբայրություն
- Համերաշխություն
- Սեր
- Համագործակցություն
- Վստահություն
- Փոխըմբռնում և այլն:


Հարց. Ինչպիսի՞ գույներով կարելի է խորհրդանշել խաղաղությունը: Ինչո՞ւ, մեկնաբանել:

- Սպիտակ
- Երկնագույն
- Կապույտ և այլ

Օրինակ՝ երկնագույն, քանի որ այդ գույնը վկայակոչում է մաքուր երկնքի և ծովի գույնը, իսկ պատերազմող երկրներում երկինքը մաքուր լինել չի կարող, այն միշտ պատված է սև ամպերով:

Սպիտակ՝ քանի որ սպիտակ գույնը խորհրդանշում է մաքրություն, պարզություն, անմեղություն և ճշմարտություն: Սպիտակ դրոշը իր գործածությամբ համարվում է զինադադարի, խաղաղության և բարի կամքի խորհրդանիշ:





Չարց. Ո՞ր բույսերն են խորհրդանշում խաղաղությունը:

- Չիթենու ճյուղ
- Ցորենի հասկ

Չիթենու ճյուղը արդեն 4000 տարի է խաղաղության և բարության խորհրդանիշ է, այն համարվում է խելքի, ողջամտության, աշխատանքի աստվածուհու խորհրդանիշ: Ցորենի հասկը վկայակոչում է մարդու արդար քրտինքով վաստակած հացը: Այն պատկերված է բազմաթիվ երկրների ազգային դրոշմների վրա:

Չարց. Ո՞ր կենդանիները կարող են խորհրդանշել խաղաղությունը:

- Աղավնին
- Կռունկը

Աղավնին խաղաղության և անմեղության համընդհանուր խորհրդանիշն է: Ուսուցիչը պատմում է Նոյի պատմությունը, որտեղ հիշատակվում է աղավնին: Նոյն ազատ արձակեց աղավնուն, որը հետ վերադարձավ ձիթենու ճյուղը բերանին, դրանով իսկ ավետելով կյանքի վերածնունդը: Այդ ժամանակից ի վեր աղավնին դարձավ ազատության, խաղաղության և Աստծո ներողամտության խորհրդանիշ:

Կա մի լեգենդ, որի համաձայն չարքերն ու կախարդները կարող են ընդունել ցանկացած կենդանու կերպար, բացի աղավնուց:

Չարց. Երաժշտական ո՞ր գործիքը կարելի է խաղաղության խորհրդանիշ համարել:

- Սրինգը
- Շվին

Այս գործիքները խորհրդանշում են պարզություն, հաշտություն: Աշակերտների պատասխանները լսելուց հետո, դասդեկը կարող է լրացումներ կատարել:

Չարց. Մարդկության պատմության ընթացքում ինչպիսի՞ պատերազմներ են եղել, ի՞նչ գիտեք դրանց մասին:

- Խաչակրաց արշավանքներ
- Առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմները
- Ղարաբաղի պատերազմ և այլն

Չարց. Ինչպիսի՞ վնասներ են կրում պատերազմող երկրները: Խոսել տեսանելի և ոչ տեսանելի վնասների մասին:

Տեսանելի վնասներ

- Քայքայված տնտեսություն
- Ավերված քաղաքներ, գյուղեր
- Մարդկային կորուստներ

Ոչ տեսանելի վնասներ

- Ազդում է երեխաների ֆիզիկական և հոգևոր դաստիարակության վրա
- Պատերազմների պատճառով առաջացող հիվանդություններ, գաղթ, ընտանիքների քայքայում*

*Տե՛ս «Խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» ձեռնարկի «Խաղաղության խորհրդանիշեր» (Դաս 28, էջ 112), «Ի՞նչ է խաղաղությունը» (Դաս 1, էջ 17), «Ձինված հակամարտության ներգործությունը երեխայի զարգացման վրա» թեմաներին (Դաս 29, էջ 115)



Այս հարցերի պարզաբանումից հետո կարելի է շարունակել և հիշել այն մասին, որ 1945թ. օգոստոսի 6-ին ճապոնիայի Հիրոսիմա և Նագասակի քաղաքների վրա ԱՄՆ առաջին անգամ փորձարկեց ատոմային ռումբը: Երեխաներին հարցնել, թե ինչպիսի՞ հետևանքներ թողեց այն բնակչության վրա, պատմել Սադակոյի պատմությունը՝ աղջկա և հազար թղթե կռունկների պատմությունը, տեղեկացնել Սադակոյի պատմության մասին գոյություն ունեցող ինտերնետային կայքերի մասին, որտեղ տեղադրված է նաև «Սադակոյն և 1000 թղթե կռունկները» երգի բառերն ու երաժշտությունը*: Կարելի է երեխաներին սովորեցնել պատրաստել թղթե կռունկ ճապոնական «օրիգամի» եղանակով:


Դասի ավարտին աշակերտներին հանձնարարել գրատախտակի վրա գրել «խաղաղություն» բառը տարբեր լեզուներով:

- ռուսերեն “ИЭД”
- անգլերեն “Peace”
- ֆրանսերեն “Paix”
- գերմաներեն “Frieden“
- լատիներեն “Pax” և այլ

*Գյունրու Վ. Համբարձումյանի անվան թ.
4 դպրոցի 2009-2010 ուս.տարվա
11-րդ դասարանի դասղեկ,
մաթեմատիկայի ուսուցչուհի
Ռիտա Խաչատրյան*



* Նույն ձեռնարկում՝ «Սադակոյն և 1000 թղթե կռունկները» (Դաս 30, էջ 120)



Հանդիպման ժամի թեման`

Կոնֆլիկտի առաջացման հիմնական պատճառները

Նպատակը`

Աշակերտները

- կսահմանեն «կոնֆլիկտ» հասկացությունը
- կվերլուծեն կոնֆլիկտի դրական և բացասական նշանակությունը
- կհիմնական կոնֆլիկտների առաջացման պատճառները
- կքննարկեն կոնֆլիկտների օրինակներ

Հանդիպման ժամի ընթացքը

Հանդիպման ժամը սկսվում է հետևյալ կերպ` «Երեխաներ, կա մի այսպիսի ասացվածք. «Քեզ հետ փլավ եփել հնարավոր չէ»: Ու՞մ մասին են այսպես խոսում»: Աշակերտները թվարկում են իրենց տարբերակները.

- ծուլ մարդու,
- ում հետ հնարավոր չէ համաձայնության գալ,
- կամակոր մարդու և այլն

Գրատախտակի վրա գրված է. «Ովքեր չեն կարող եփել ապուր, ստանում են շիլա-փլավ»: Դասղեկն առաջարկում է երեխաներին քննարկել այդ նախադասությունը, ի՞նչ է այն նշանակում, առաջարկում է բերել օրինակներ, որոնց նրանք հանդիպել են, կամ մասնակից են եղել տանը, դպրոցում, բակում կամ որևէ այլ վայրում:

Լսվում են բոլորի պատասխանները, օրինակներն ու կարծիքները: Քննարկումից հետո աշակերտները գալիս են այն եզրակացության, որ ովքեր չեն կարող հաշտ լինել շրջապատի հետ նրանք միշտ ստեղծում են դժվարություններ սեփական անձի և շրջապատի համար, ստեղծում են «շիլա-փլավ», այսինքն` կոնֆլիկտային իրավիճակներ: Այնուհետև երեխաների միջոցով սահմանվում է կոնֆլիկտ հասկացությունը: Նրանք կարող են տալ բազմաթիվ սահմանումներ:

Օրինակ`

Կոնֆլիկտի ընթացքում կողմերը ձգտում են հասնել իրենց ցանկալի արդյունքին, ձեռք բերել որոշակի արժեքներ` ուրիշների հետաքրքրությունների ճնշման միջոցով:

Ուսուցչի օգնությամբ երեխաները տալիս են կոնֆլիկտի իրենց սահմանումը «պրիզմայի» եղանակով: Երեխաների տված պատասխանների միջոցով էլ սահմանվում է կոնֆլիկտը:

Դասղեկը նշում է, որ եթե կոլեկտիվի անդամները չեն կարող համերաշխ աշխատել, ապա այնտեղ անընդհատ հարաբերություններ են պարզում, կուտակվում են տարբեր տեսակի վիրավորանքներ, հնարավոր են նույնիսկ ընդհարումներ, բռնության դեպքեր և այլն: Կոնֆլիկտ բառը լատիներենից թարգմանաբար նշանակում է ընդհարում, հակամարտություն*: Տեսակետներ, արժեքներ, դիրքորոշում քննարկելիս, կարող է կոնֆլիկտ առաջանալ, հնարավոր են նույնիսկ բռնության դեպքեր, եթե դրա դեմ միջոցներ չձեռնարկվեն: Երեխաները պետք է իմանան, որ կոնֆլիկտային իրավիճակները կազմում են մեր կյանքի մի



մասը, դրանք իսպառ բացառել հնարավոր չէ: Սակայն կարելի է սովորել կոնֆլիկտի լուծման հմտությունները, որոնք կօգնեն մեզ խաղաղ ճանապարհով լուծել դրանք:

Քննարկման համար երեխաներին կարելի է առաջարկել հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է կոնֆլիկտային իրավիճակը:
- Երբևէ եղե՞լ եք կոնֆլիկտային իրավիճակում: Շարունակել գրատախտակին գրված նախադասությունը՝ «Կոնֆլիկտի առաջացման պատճառը այն էր, որ...»
- Ո՞ր մարդկանց հետ եք դուք ավելի հաճախ մտնում կոնֆլիկտի մեջ: Ի՞նչո՞ւ:
- Ի՞նչը կարող է ձեզ համար ավելի հաճախ կոնֆլիկտի առաջացման պատճառ անդիսանալ:
- Կարելի՞ է արդյոք լուծել կոնֆլիկտը՝ չոտնահարելով կոնֆլիկտի մեջ հայտնված մարդկանց իրավունքները, չնսեմացնելով նրանց զգացմունքները: Երբևէ եղե՞լ եք կոնֆլիկտի նման հանգուցալուծման ականատեսը:
- Ի՞նչն է խանգարում ձեզ կամ այլ մարդկանց լուծելու կոնֆլիկտներն այնպես, որ երկու կողմերն էլ բավարարված լինեն:

Կարելի է նաև ընտրել դասի անցկացման այնպիսի տարբերակ, երբ այս հարցերը նախօրոք տրվում են աշակերտներին մտածելու համար: Աշակերտներին նույնպես կարելի է առաջարկել ներկայացնել տարբեր կոնֆլիկտային իրավիճակների օրինակներ և բեմականացնել դրանք:

Իրավիճակ 1.

Ընտանիքում՝

Դուստրը իրաժարվում է հագնել վերնազգեստը, մայրը պնդում է, որ հագնի:

Իրավիճակ 2.

Դասարանում՝

Աշակերտները վիճում են այս կամ այն նստարանին նստելու համար:

Իրավիճակ 3.

Կոնֆլիկտ տարիքային տարբերության պատճառով՝

Կոնֆլիկտը զարգանում է տատիկի և թռռան միջև հագուստի ոճի շուրջ:

Կոնֆլիկտային բոլոր իրավիճակները քննարկվում են, գնահատվում են կոնֆլիկտող կողմերի վարքագիծը, առաջարկվում տարբեր ելքեր տարբեր կոնֆլիկտային իրավիճակներից:


Երեխաների հետ քննարկվում են կոնֆլիկտների առաջացման հիմնական պատճառները:

- Նպատակների անհամատեղելիություն
- Միջոցների սահմանափակություն
- Կարծիքների տարբերություն
- Արժեքների և ընկալումների տարբերություն
- Տեղեկատվության պակաս
- Հիմնական պահանջմունքների բավարարված չլինելը*

Շարունակել քննարկումը, տալով հետևյալ հարցերը.

- Մի՞շտ է արդյոք անխուսափելի կոնֆլիկտը
- Ի՞նչպե՞ս կարելի է խուսափել կոնֆլիկտից
- Ի՞նչ է անհրաժեշտ անել դրա համար
- Ի՞նչ վարքագիծ կարելի է ընտրել կոնֆլիկտից խուսափելու համար

* Տե՛ս «խաղաղության և կոնֆլիկտների խաղաղ լուծման կրթություն դպրոցներում» ձեռնարկի «Կոնֆլիկտների առաջացման պատճառները» (Դաս 2, էջ 19) թեման



Երեխաներին ներկայացվում են կոնֆլիկտների խաղաղ լուծման հմտություններն ու պատվիրանները*։ Կարելի է երեխաներին առաջարկել նաև մշակել որոշակի կանոններ այսպես կոչված «կոնֆլիկտային» մարդկանց համար։ Դրանք կարող են օրինակ այսպիսին լինել.

- Մի՛ աշխատեք իշխել, եղե՛ք սկզբունքային, սակայն մի՛ պայքարեք սկզբունքի համար, հիշե՛ք, որ ուղղամտությունը լավ բան է, սակայն ոչ միշտ:
- Մարդկանց նկատմամբ եղե՛ք հանդուրժող և արդարացի, մի՛ գերազնահատեք ձեր և մի՛ թերազնահատեք դիմացինի ընդունակություններն ու հնարավորությունները:
- Մի՛ ցուցաբերեք նախաձեռնություն այնտեղ, որտեղ դրա կարիքը չկա:

Հասարակության մեջ անհնարին է ապրել առանց հակասությունների, քանի որ մարդիկ միշտ տարբերվում են իրենց հայացքներով, ճաշակով և այլն: Սակայն այդ հակասությունները չի կարելի հասցնել կոնֆլիկտների: Որպեսզի պահպանվի հոգեկան, ֆիզիկական և հոգևոր առողջությունը, պետք է սովորել կանխարգելել կոնֆլիկտները, իսկ եթե կոնֆլիկտն արդեն բռնկվել է, անհրաժեշտ է իմանալ նրանից դուրս գալու եղանակները:

Նման ուսուցումը կարող է կանխարգելիչ բնույթ ունենալ, եթե հնարավոր է հաշտության հասնելու ճանապարհների մասին գիտելիքներ, հմտություններ և վերաբերմունք ձևավորել, ապա երեխաները հետագայում ի վիճակի կլինեն պատասխանատվություն և կամք դրսևորել, դառնալ խաղաղասեր և հանդուրժող:

*Գյունրու Վ. Թեքեյանի անվան թիվ 2 դպրոցի
2009-2010 ուստարվա 9-րդ «Ա» դասարանի դասղեկ,
ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի
Ասյա Ղազարյան*

* Նույն ձեռնարկում՝ «Կոնֆլիկտների խաղաղ լուծման հմտություններ, պատվիրաններ» (Դաս 13, 14, էջ 52-54) թեմաները

Հանդիպման ժամի թեման՝ Խաղաղություն և կոնֆլիկտների խաղաղ լուծում

Դասի նպատակը՝
Երեխաների մեջ զարգացնել կոնֆլիկտային իրավիճակներից դուրս գալու հմտություններ և կարողություններ, սերմանել բարություն, ազնվություն, հայրենասիրություն:

Դասի կահավորումը՝

1. Պաստառներ.
 - «Խաղաղության աղավնին վտանգի մեջ է»
 - «Կյանքի երեք տարբեր ուղիները»
 - «Խաղաղությունն իմ պատկերացմամբ»
 - «Խաղաղություն, թե՞ կոնֆլիկտ. սա է խնդիրը»
 - «Խաղաղության աղավնի» աքրոստիկոս:
2. Շրջանակներ՝ հաղթող և պարտվող
3. Տուփ կամ որևէ արկղիկ
4. Գունավոր մատիտներ, թերթիկներ, թիմերը բնորոշող սիմվոլներ՝ մեծ փուչիկ լցված աղավնիներով և փայլուն թղթերով:



Դասը վարելու մեթոդները՝

Խճանկար, շրջագայություն պատկերասրահում, ձնագնդի, T-ձև աղյուսակ, մտագրոհ:

Դասարանը բաժանվում է 4 թիմի՝ աղավնի, աստղ, մուրրակ, երազանք:

Մտագրոհի օգնությամբ բացահայտել դասի նպատակներն ու խնդիրները՝ սկզբում կենտրոնանալով միասնություն, համերաշխություն, համագործակցություն հասկացությունների վրա: Կարդալ ժողովրդական ասացվածքներ, թևավոր խոսքեր, առակներ, որոնք մեկ անգամ ևս կապացուցեն, որ «մեր ուժը միասնության մեջ է»: Այդ գաղափարը հիմնավորելու համար օգտագործել «Կյանքի երեք տարբեր ուղիները» պաստառը: Ուղիներից մեկը արևոտ ու ծաղկաշատ է, մյուսը՝ քարքարոտ ու խոչընդոտներով լի, իսկ երրորդը՝ անորոշ: Ճանապարհների վերջին փակ դռներ են, որոնց ետևում անակնկալներ են՝ սև ագռավ, արև, արջուկ: Յուրաքանչյուր թիմ պետք է պաշտպանի որևէ կոնկրետ ճանապարհով անցնելու գաղափարը, վերջում թիմերը պետք է հանգեն այն եզրակացության, որ միասին կարելի է հաղթահարել ցանկացած դժվարություն, անցնել ցանկացած ճանապարհով և հասնել հաջողության:

Մտագրոհի կոնֆլիկտային, բացասական բառերի օգնությամբ: Նպատակը՝ ինչպես ոչնչացնել չար ուժերին, բացասական երևույթները, լուծել իրենց առջև դրված խնդիրը:

Քայլ 1. Յուրաքանչյուր աշակերտի առաջարկել գրել իրեն բաժին ընկած բացասական բառի հակառակը՝ նպատակ ունենալով հավասարակշռության մեջ պահել չարն ու բարին: Օրինակ՝ արտասվել - ծիծաղել, պատերազմ - խաղաղություն:



Քայլ II. Ստացված զույգերով կազմել բառակապակցություն, արտահայտություն կամ նախադասություն այնպես, որ չարը նվազի, իսկ բարին աճի:

Օրինակ, ուրախությունից արտասվել – սրտանց լիաթոք ծիծաղել:

Քայլ III. Դրական բառերը փակցնել «խաղաղություն» պաստառին, իսկ չար ու բացասական բառերը բանտարկել տուփի մեջ, որտեղ հետագայում պիտի բանտարկվեն բոլոր չար ուժերը: Ընթացքում՝ հարցեր տալ, քննարկել: Այս փուլի ավարտին գալիս են այն եզրահանգման, որ ձեռքի տակ որպես «զենք» ունենալով ընդամենը թուղթ ու գրիչ և փոքրիկ տուփ կկարողանանք հավասարակշռել, նվազեցնել, ապա նաև իսպառ ոչնչացնել չարը:



Չաջորդ փուլ. «խաղաղության աղավնին վտանգի մեջ է»:

Ստագրոհի հարցերի միջոցով.

- Ի՞նչ է ձեզ համար խաղաղությունը:
- Խաղաղության ի՞նչ խորհրդանիշ գիտեք և ի՞նչ կավելացնեք որպես խորհրդանիշ:

Ներկայացվում է հետևյալ իրավիճակը. «Խաղաղության աղավնին՝ այդ քնքուշ ու նուրբ թռչնակը ինչպե՞ս է կարողացել դարեր շարունակ պահպանել մեր խաղաղությունն ու անվտանգությունը, և հիմա նրա կյանքը վտանգի մեջ է: Նա ինքը պաշտպանության կարիք ունի, շրջապատված է վտանգավոր ու չար կենդանիներով ու թռչուններով»: Ինչպե՞ս լուծել այս խնդիրը:

Առաջարկվում է խաղաղության վերաբերյալ ասացվածքներով փրկել աղավնուն սպառնացող վտանգներից, իսկ չար գազաններին բանտարկել այն նույն տուփի մեջ, որտեղ դրված են չար ու բացասական իմաստ ունեցող բառերը:

Աղավնուն ազատագրելուց հետո թիմերին տրվում են հետևյալ առաջադրանքները.

Թիմ 1. Հիշել որևէ բանաստեղծություն աղավնու մասին:

Թիմ 2. Հիշել որևէ երգ աղավնու մասին և կատարել որևէ հատված:

Թիմ 3. Կազմել աքրոստիկոս աղավնու մասին:

Թիմ 4. Հորինել պատմվածք այն մասին, թե ի՞նչ պատահեց բանտարկված կենդանիների հետ: (Հորինվեց հիանալի ավարտ՝ բոլոր չար ուժերը հավաքվեցին մեկտեղ, սկսեցին վիճել, կռվել, վնասել իրար այնքան, մինչև որ հոգնեցին ու ուժերը սպառվեցին):



Չաջորդ փուլ. Տեղափոխվել իրական կյանք, որտեղ կան իրական կոնֆլիկտներ, որոնք պահանջում են իրական լուծումներ: Հանձնարարել թիմերին քննարկել որևէ կոնֆլիկտային իրավիճակ և առաջարկել կոնֆլիկտից դուրս գալու կոնկրետ ուղիներ: Նախապես բացատրել, որ կոնֆլիկտային իրավիճակից դուրս գալու 4 հնարավոր ելքեր գոյություն ունեն:

- հաղթանակ-հաղթանակ
- պարտություն- հաղթանակ
- հաղթանակ-պարտություն
- պարտություն- պարտություն

Թիմերին հանձնարարել տարբեր առաջադրանքներ, օրինակ՝

- Գտնել կոնֆլիկտային իրավիճակից դուրս գալու լավագույն ելքը/լուծումը
- Առաջարկել միևնույն խնդրի 4 տարբեր լուծումներ

Հանդիպման ժամն ավարտել Սևակի «Խաղաղություն» ստեղծագործությամբ: Թիմերին առաջարկել արտասանել մեկական քառատող (յուրաքանչյուր տողը մեկ աշակերտ արտասանելուց հետո ձեռքը դնում է ընկերոջ ուսին, որն էլ շարունակում է հաջորդ նախադասությունը և այսպես շարունակ): Լսվում է մեղմ երաժշտություն:

*Գյունրու Ջ. Բայրոնի անվ. թիվ 20 դպրոցի
2009-2010 ուստարվա 7գ դասարանի դասղեկ,
անգլերեն լեզվի ուսուցչուհի
Օհաննա Ավետիսյան*



Հանդիպման ժամի թեման՝

Խաղաղասեր ծնողներ, խաղաղասեր երեխաներ

Նպատակը՝

Ծնողներին տալ կոնկրետ հնտություններ երեխաների հետ առողջ փոխհարաբերություններ հաստատելու համար

Ծնող լինելը հեշտ չէ: Մենք սիրում ենք մեր երեխաներին ավելին, քան կարող ենք ասել, բայց մենք վստահ չենք, թե ինչպես օգնել նրանց դառնալ երջանիկ, հոգատար մարդիկ՝ իր սեփական անձի նկատմամբ առողջ վերաբերմունք ունենալով: Մենք ստանում ենք այնքան շատ տեղեկատվություն, որ չգիտենք, թե որն ընդունենք: Տարբեր գրքեր տալիս են մեզ հակասող տեղեկատվություն, իսկ երբ միացնում ենք հեռուստացույցը, ապա լսում ենք բոլորովին այլ բան: Սակայն այն, ինչ մենք փնտրում ենք, դա հավասարակշռված, խելացի մոտեցումն է՝ ծնող լինելու հարցին, ինչը կօգնի մեզ խաղաղ ապրել մեր երեխաների հետ և նախապատրաստել նրանց ուրիշների հետ խաղաղ ապրելուն: Մի անգամ մի ծնող ինձ ասաց. «Որոշ երեխաներ հոյակապ մարդիկ են դառնում, մյուսները կոտրում են մեր սիրտը: Ես կուզեմայի, որ լինեի մի ուղեցույց, որը մեզ տաներ ճիշտ ուղղությամբ»: Դա այն է, որ մենք կարող ենք շարժվել երջանիկ, շփվող և հարգալից երեխաներ դաստիարակելու ուղղությամբ: Եվ կան փորձված, գործնական, կոնկրետ ռազմավարություններ, որոնք կօգնեն մեզ այդ գործում: Եկե՛ք դիտարկենք հետևյալ երկու սցենարները՝ տեսնելու համար, թե ինչքան կարևոր է հասկանալ ինչ է պետք անել և ինչպես:



Սուլպերմարկետ – Սցենար 1

Ինչպես միշտ, Մերին շտապում է, երբ կանգ է առնում սուլպերմարկետի մոտ որոշ գնումներ կատարելու համար: Նա հիշում է, որ իրենց ընտանեկան ատամնաբույժը խստորեն արգելել է 5 տարեկան Արմանին քաղցր ուտել: Մերին ասել է Արմանին այդ մասին ատամնաբույժի հետ անցյալ շաբաթ ունեցած հանդիպումից հետո, և հիմա՝ հույս ունի, որ Արմանը մեծ աղմուկ չի բարձրացնի, երբ նա գնի որևէ այլ բան: Մերին ատում է իշխանության համար պայքարը, որը հաճախ տեղի է ունենում նրանց միջև, և նա հուսով է, որ դրանք ավելի շատ «բեմական» են: Սեղմելով ատամները, նա վերցնում է զամբյուղը և Արմանի հետ միասին քայլում դեպի քաղցրավենիքի բաժինը:

Մի քանի վայրկյանից Արմանն ասում է. «Մայրիկ, շոկոլադ եմ ուզում»:

«Ո՛չ մի շոկոլադ,- ասում է Մերին. Դու գիտես, թե ինչ է ասել բժիշկը. Շոկոլադը վատ է քո ատամների համար: Հիշո՞ւմ ես: Դու չես ուզում կարիես ունենալ, չէ՞»:

«Բայց ես ուզո՞ւմ եմ շոկոլադ», - պատասխանում է Արմանը՝ պահանջող ձայնով:

Վախենալով իշխանության համար պայքարից, բայց ցանկանալով հաստատուն մնալ, Մերին փոր-



ծում է համոզել Արմանին: «Դու չես ուզում ատամիդ նոր պլոմբա ունենալ, չէ՞: Ինչո՞ւ՞ չփոր-
ծենք մեկ այլ բան, օրինակ, միրգ գնել»:

«Ես չեմ ուզում ոչ մի ուրիշ բան: Ես շոկոլադե եմ ուզում»- պահանջում է Արմանը:

«Ինձ հետ այդ տոնով մի՛ խոսիր, Արման: Ես ասացի ո՛չ: Մենք այսօր շոկոլադե չենք գնե-
լու», - ասում է Մերին կտրականապես:

«Բայց ես ուզում եմ շոկոլադե», - պահանջում է Արմանը, նույնիսկ ավելի բարձր ձայնով:

«Ես ասացի ո՛չ: Հասկանո՞ւմ ես: Ո-2»- զայրացած առարկում է Մերին, բառը տառերով արտասանելով: Սա ավելի է ջղայնացնում Արմանին:

«Գարիկը ուտում է շոկոլադե և քաղցրեղեն: Նրա ատամները խռոչներ չունեն: Դու ասում ես դա, որովհետև դու վատն ես, և ատամնաբույժն էլ է վատը»- բղավում է Արմանը աչքերը արցունքով լցնելով:

«Վերջ: Եթե դու ևս մեկ բառ ասես շոկոլադեի մա-
սին, ուրեմն կզրկվես հեռուստացույցից մեկ շաբա-
թով: Հասկացա՞ր» -բղավում է Մերին կարմրած դեմ-
քով:

Հինա Արմանը սկսում է իսկական ողբը: Մերիի զարկերակը սկսում է արագ աշխատել և բերանը չո-
րանում է: Միայն ոչ ևս մեկ տեսարան, մտածում է նա հուսահատված: Նա նայում է շուրջը և տեսնում է, թե ինչպես խանութի աշխատակիցն աչքի տակով հետևում է նրանց: Հուսահատված, Մերին սեղմում է ատամները, վերցնում է մեկ տուփ շոկոլադե և արագոր-
բե՛ն նետում այն զամբյուղի մեջ:

«Ահա, հինա դու երջանի՞կ ես», -հարձակվում է նա Արմանի վրա: Արմանը անմիջապես դադարեցնում է լացը, վերցնում է շոկոլադեի տուփը զամբյուղից և ամուր պահում իր մոտ:

«Շնորհակալություն, մայրիկ», - ասում է նա՝ ժպիտով նայելով Մերիին:

«Դե իհարկե, խնդրե՛մ», - ասում է նա ջղայնացած: Մերին իրեն պարտված է զգում և վի-
րավորված: Պետք է որ նման իրավիճակը հարթելու ավելի լավ ուղի լիներ, մտածում է նա ինքն իրեն, մինչ նա և Արմանը ուղղվում են դեպի դրամարկղը:


Քանի՞ անգամ եք դուք ունեցել նույն զգացմունքները, ուզենալով անել այն, ինչ ավելի լավ է ձեր երեխայի համար, բայց ձեր լավագույն մտադրությունները խափանվել են, երբ ձեր երեխան ընդդիմացել է: Դուք երբևէ հանձնվե՞լ եք՝ ձեռքերը վեր բարձրացնելով և ասելով. «Պետք է որ ավելի լավ ուղի լիներ»: Մի՛ վախեցեք, կա այդպիսի ճանապարհ: Շարունակեք՝ տեսնելու համար, թե ինչպես այս սցենարը կարող է փոխվել պլանավորվելու, հաղորդակա-
ցվելու, խնդիրների լուծման միջոցով և հետևելով խաղաղ ծնող լինելու բոլոր տարրերին:

Սուպերմարկետ – Սցենար 2

Անին և նրա ամուսին Հայկը շատ են աշխատել ավելի խաղաղասեր ընտանիք ստեղծե-
լու համար: Նրանք սկսել են իրականացնել ընտանեկան ժողովների գաղափարը: Այդ ժողով-
ներին նրանք ներգրավել են իրենց 5-ամյա դուստր Օֆելյային, որը մասնակից է լինում նաև ընտանեկան որոշումների կայացմանը: Միաժամանակ նրանք սահմանել են դրական վարքի հստակ չափանիշեր՝ ասելով Օֆելյային, թե ինչ է ակնկալվում նրանից՝ ելնելով իրենց սահմանած չափանիշներից և նշելով դստեր դրական վարքի բոլոր արտահայտումները:

Արդյունքում Օֆելյան, որը միշտ մեծ ցանկութ-
յուններ է ունեցել, դառնում է ավելի շփվող և ավելի քիչ է մտնում իշխանության համար պայքարի մեջ: Նա սկսել է հասկանալ, որ լաց լինելը և թնկթնկալը անօ-
գուտ են իր հայրիկի և մայրիկի համար:





Անին ու Չայկը վերջերս պայմանավորվել են հանել շոկոլադն իրենց ընտանիքի սննդակարգից: Ցանկանալով նախապատրաստել Օֆեյային սրան իրենց հաջորդ գնումներից առաջ, նրանք խոսում են դրա մասին ընտանեկան ժողովի ժամանակ: Երբ Օֆեյան հակառակվում է դրան, ծնողները լսում են նրան մինչև վերջ, բայց հստակ ասում են, որ այս մասնավոր որոշումը ընդունողը նա չէ: Ասելով Օֆեյային, որ իրենք ակնկալում են նրա համագործակցությունը, իրենք խնդրում են նրա «օգնությունը» նոր, ավելի առողջարար սնունդ գտնելու գործում:

Այսպիսով, Օֆեյան նախապատրաստված է, երբ Անին հաջորդ օրը նրան տանում է սուպերմարկետ: Սակայն երբ նրանք հասնում են քաղցրեղենի բաժին, Օֆեյան ձգվում է դեպի շոկոլադը, վերցնում է տուփը և ասում. «Մայրիկ, ես գիտեմ, թե ինչի մասին ենք մենք խոսել, բայց ես իսկապես ուզում եմ շոկոլադ: Ես խոստանում եմ, որ կլվանամ ատամներս ամեն անգամ ուտելուց հետո. Լա՞վ»:

Լսելով, թե ինչ է ասում Օֆեյան և չուզենալով հանձնվել իր զգացմունքներին, Անին ասում է. «Ես հասկանում եմ, թե դու ինչ ես զգում, Օֆեյա. Դու իսկապես սիրում ես շոկոլադ և կուզենայիր շարունակել ուտել դա: Դու հուսով ես, որ ես կփոխեմ իմ կարծիքը, այնպես չէ՞»:

«Խնդրում եմ, մայրիկ»- ասում է Օֆեյան: «Ես խոստանում եմ, որ այլևս չաքարով ոչինչ չեմ ուտի, եթե դու թույլ տաս ինձ հիմա ուտել այս շոկոլադը»:

«Ես կուզենայի թույլ տալ քեզ ուտել դա, եթե դա լավ լիներ քեզ համար, բայց դա օգտակար չէ, և մենք որպես մեկ ընտանիք որոշել ենք կրճատել շաքարի օգտագործումը, ներառյալ շոկոլադը: Ցավում եմ, որ դու հիասթափված ես, բայց սա այն որոշումն է, որ հայրիկը և ես արդեն ընդունել ենք», - ասում է Անին նրբորեն, բայց միևնույն ժամանակ կտրականապես՝ նայելով ուղիղ Օֆեյայի աչքերին:

Անին որոշել էր գնումների գալ այնպիսի ժամանակ, երբ նրանք չեն շտապում, որպեսզի ավելի հեշտ լինի համբերատար լինել: «Նայիր սրանց», - ասում է նա, վերցնելով շոկոլադի մի տուփ ու հատապտուղների մի տուփ: «Նրանք երկուսն էլ որոշ քաղցրություն ունեն: Սիսա ևս մեկը», - ավելացնում է Անին, ցույց տալով մեկ այլ տուփ ուրիշ հատապտուղներով: «Ո՞րը կուզենայիր գնել այսօր»:

«Ես ուզում եմ սա՞», - ասում է Օֆեյան, ձգվելով դեպի շոկոլադը:


Սիսա այստեղ Անին հասկանում է, որ նա պետք է ցույց տա Օֆեյային իր սահմանները: «Ներիր, Օֆեյա», - ասում է նա, շարունակելով մնալ մեղմ և կտրուկ: «Ոչը նշանակում է ո՛չ: Դու կարող ես ընտրել կա՛մ մեկ այլ տեսակի հատապտուղ, կա՛մ միրգ, կա՛մ էլ դա կանեն ես: Ընտրությունը քոնն է»: Այստեղ Անին Օֆեյային տալիս է ընտրության հնարավորություն, բայց սա արդեն հստակորեն այն սահմանների մեջ է, որոնք նա սահմանել է որպես մայր:

Օֆեյան մտածում է իր տարբերակների մասին: Նա գիտակցում է, որ լաց լինելը չի օգնի, որովհետև նա փորձել է դա ավելի վաղ: Ամեն անգամ ծնողները հետևողական են եղել լացին չհանձնվելու գործում: Օֆեյան մտածում է ևս մեկ պահ, մի կողմ է դնում շոկոլադը և ասում. «Լա՛վ մայրիկ, իսկ եթե փորձե՞նք այս երկուսը»: Նա ձգվում է դեպի հատապտուղներով տուփերը:

«Լավ ընտրություն է, Օֆեյա՛», - ասում է Անին՝ փաթավելով աղջկան: «Ես հպարտանում եմ քեզանով: Արի՛ սպասենք, մինչև հայրիկը տեսնի մեր գնումները: Համոզված եմ, որ նա երկուսն էլ կուզենա փորձել»: Օֆեյան փաթաթվում է մայրիկին՝ հպարտանալով, որ ճիշտ ընտրություն է կատարել և՛ գնումների, և՛ լավ վարքի հարցում:

Նման սցենարները ոչ միայն հնարավոր են, այլև հավանական են, երբ դուք ձեր տրամադրության տակ ունեք խաղաղության կառուցման (peacemaking) հմտություններ: Անին և Չայկը օգտագործել են այս հմտությունները, ինչը օգնեց նրանց մեծացնել ավելի խաղաղասեր երեխա և ստեղծել խաղաղ մթնոլորտ իրենց տանը: Որպես ուղեցույց նրանք օգտագործում են հետևյալ սկզբունքները.


- Խաղաղությունը սկսվում է ինձանից;
- Ես դարձրել եմ իմ տունը բարի բառերի վայր;
- Ես տեսնում եմ իմ երեխաների դրական վարքագիծը և գովում եմ նրանց անմիջապես, հատուկ կերպով և անկեղծորեն;




- Ես օրական անցկացնում եմ առնվազն 15 -20 րոպե յուրաքանչյուր երեխայի հետ՝ լսելով, շփվելով և իմ ամբողջ ուշադրությունը նվիրելով նրան;
- Ես հստակորեն պատկերացնում եմ այն վարքագծի չափանիշերը, որոնք ես ակնկալում եմ իմ երեխաներից: Ես հարգում եմ այդ չափանիշերը և ակնկալում, որ նույնը անեն իմ երեխաները;
- Ես տրամադրում եմ իմ երեխաներին ազատ ժամանակ, որի ընթացքում նրանք կարող են ուղղակի «երեխա լինել»;
- Ես անցկացնում եմ ընտանեկան ժողովներ, որտեղ երեխաներն իրենց ձայնն ունեն ընտանեկան գործերում;
- Ես ստեղծել եմ խաղաղասիրության հիմնադրամ մեր տանը՝ սահմանելով իմ երեխաների հետ «խաղաղասեր ընտանիքի ուղեցույց»;
- Ես միշտ հիշում եմ, որ ես ծնող եմ և ես արժանի եմ, որ ինձ լսեն;
- Ես ամբողջ հոգով լսում եմ, թե ինչ են ասում իմ երեխաները, և սովորեցնում եմ նրանց լսել մյուսներին;
- Ես սովորեցնում եմ երեխաներիս զսպել զայրույթը և օրինակ եմ ծառայում այս գործում;
- Ես հարթում եմ կոնֆլիկտները խաղաղ կերպով և սովորեցնում եմ երեխաներիս անել նույնը;
- Ես ուղիներ եմ փնտրում օգնել իմ երեխաներին հասնելու հաջողության;
- Իմ բոլոր գործողություններն ուղղորդվում են սիրով, համբերատարությամբ, ազնվությամբ, հարգանքով և շիտակությամբ: Ես դաստիարակում եմ այս հատկություններն իմ երեխաների մեջ;
- Ես հավատարիմ եմ խաղաղասեր ծնող (peaceful parent) լինելու գաղափարին, որն էլ ղեկավարում է իմ բոլոր գործողությունները;
- Ես ամեն օր հիշում եմ, որ մենք բոլորս ազդեցություն ունենք մեզ շրջապատող աշխարհի վրա, և ես սովորեցնում եմ դա իմ երեխաներին:

*Նյութը թարգմանվել է «խաղաղասեր ծնողներ, խաղաղասեր երեխաներ: Երջանիկ ընտանիք կառուցելու գործնական ուղիներ» գրքից հեղինակ՝ Նատմի Դրյու**

* Նատմի Դրյուն աշխարհում հայտնի է կոնֆլիկտների խաղաղ լուծման և խաղաղաշինության բնագավառում իր կատարած ներդրումներով: Նա 6 շատ հայտնի գրքերի հեղինակ է, որոնք արժանացել են տարբեր մրցանակների: Նրա հիմնական «խաղաղաշինության հմտությունների ուսուցում» գիրքն առաջիններից մեկն էր, որ խաղաղաշինության գաղափարը ներմուծեց հանրային կրթություն: Դիտվելով որպես տեսլական, Նատմի Դրյուի աշխատությունը հնարավորություն տվեց ընտանիքներին, ուսուցանողներին և երեխաներին կիրառել այս հմտություններն առօրյա կյանքում:
 * Վերոհիշյալ թեմայով սեմինարներ հաջողությամբ անցկացվել են Շիրակի մարզի թվով 5 դպրոցների 5-9-րդ դասարանների 298 ծնողների համար:





Մեր

խաղաղության

այգին

ԻՆՉ ԿԼԻԲ ԵՑԵ ԻՍԿՐ՝ ԱՅՐԱՆԱԼԵՐԻ ՁԵՐՈՒՄ ԼՐԱՆ ԿԱՆՉԻՑԵՆ ԵՎ ԲՆԻՎՈՒՄԵՆ:
ՈՒՍՈՒՐԻ ԲՆԵՐ ՍԻՎԵՐԻ ԾԻ ԲԱՐԻՏԱՐԵՐ ԵՎ ԲԱՐՏԻ ԿՐ ԵՆՁԻՔ՝ ՍԻՎԱԿԻՄԻ:
ԸՆԿՐԵՐԻՔ, ԻՄՊՐՈՑՈՒՄ ԵՎ ՊՅԱՆ ՍԻՎԱԿԻՑԵՆ:
ԳՅՐԻ ԿԱՆՉՈՒՄԵՆ, ՍԵՐՄԵՐ ՍԻՎԵՐԻ՝ ԿՈՒՐԵՐ ԵՄ՝ ԿԱՆՉՈՒՄԵՆ, ԿՐԻ՝ ԲՆԵՐ ԸՆԴՈՒՄԻ: